Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1823

232.9
Z-15

1888

2001

2010

60

ՅԻՍՈՒՍԻ ԵԿՈՒՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՆԻՄԸՆ ՀԱԼ ԱՆՈՒՆ ԵՐԵՒԵԼԻ ԱՆԳԼԻԱՅԻ
ՔԱՐՈԶԶԻՆ ՅՕՐԻՆԱԾ ՏԵՏՐԱԿԻՆ

معارف عمومیه نظارت جلیله‌سنك ۲۵ محرم ۳۰۶ و ۱۹ ایلول
۳۰۶ تاریخلی و ۶۲۸ نومرولی رخصتنامه‌سیله نشر اولنمشدر
ومصارف آمریقان مسیونر شرکتی طرفندن تسویه اولنه‌رق طبع اولنمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1888

232.9
Z-15

232.9
Հ-15

ԵԿՈՒՐ ՅԻՍՈՒՍԻ

Լսէ սիրելի մեղսակից իմ. ի՞նչպէս քաղցր, ի՞նչպէս զարմանալի հրաւէր է այս։ Աստուած կը խօսի, և կը խօսի քեզի։ Հայրն Աստուած կ'ըսէ, «Եկուր։» Որդին կ'ըսէ, «Եկուր,» Սուրբ Հոգին կ'ըսէ, «Եկուր։» Օրհնեալ հրեշտակները արձագանգ կու տան աղաղակելով, «Եկուր։» Շատ մը խեղճ մեղաւորներ որ ընդունած են այս հրաւէրը, միաձայն կ'ըսեն, «Եկուր Յիսուսի։» Ով ողորմելի մեղաւոր, այս տեսարակը անոնց հետ միաբան կ'աղաչէ քեզ ամենայն անկեղծութեամբ, պարզութեամբ և սիրով, որ դաս Յիսուսի։

Երբ ինքն Յիսուս երկրիս վրայ կը դտնուէր, լաւ գիտնալով մարդոց նեղութիւնները և մեղքերը և ըստ լով կարեկցութեամբ լեցուն, մինչ կը նայէր իւր շուրջը դտնուող բազմութեան վրայ որ օր մը շրջապատեցին զնա, ըսաւ սիրով, «Եկէք ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորածներ, և ես ձեզ պիտի հանգչեցընեմ։» Մատթ. ԺԱ. 28—30։ Ինչ որ ըսաւ այն ատեն, կ'ըսէ հիմա ևս։ Հրաւէրը որ ըրաւ այն օրուան մարդոց՝ կ'ընէ քեզի ալ, մեղսակից իմ, ըսելով, «Եկուր ինծի։» Ո՞չ ապաքէն դուն բեռնաւորուած ես մեղքով։ Ո՛հ, ու-

ըեմն եկուր Յիսուսի, և պիտի գտնես հան-
գիստ։ Եկուր Յիսուսի, եկո՛ւր Յիսուսի։

ԵԿՈՒՐ ՅԻՍՈՒՍԻ

Յիսուս կը խոստանայ հանգիստ։ Բայց հոգ-
ւոյն հանգիստը շատ մը աւելի լաւ է քան
մարմնոյն հանգիստը։ Գէշ բան է ըլլալ գերի,
հեծել, արիւն թափել, չարաչար աշխատել,
բայց շատ մը աւելի գէշ է ըլլալ Սատանային
գերի, ունենալ չար խիղճ և վշտացեալ սիրտ։
Կարելի չէ ուրիշ կերպով ազատ ըլլալ այս բա-
ներէն՝ բայց եթէ գալով Յիսուսի։ Եթէ մենք
կու գանք Յիսուսի, նա կը թեթևցունէ ամէն
ուրիշ բեռ։ Աղքա՞տ ես։ Եկո՛ւր, և Յի-
սուս պիտի ընէ քեզ հարուստ յաւիտեան։
Հիւա՞նդ ես։ Եկո՛ւր և նա պիտի բժշկէ քեզ
քու ամենէն գէշ ախտէդ։ Տրտմա՞ծ ես։ Ե-
կուր, և նա պիտի որբէ արցունքներդ։ Երեսի
վրա՞յ թողուած ես։ Եկուր, և ձախորդու-
թեան մէջ նա պիտի ըլլայ քեզի եղբայր, որ
չփոխուիր, և չմեռնիր բնաւ։ Մեղքով բեռ-
նաւորուա՞ծ ես։ Ո՛հ, ուրեմն եկուր Յիսուսի,
և նա վրայէդ մէկդի պիտի առնու բոլոր մեղ-
քերդ։ Կը սոսկա՞ս մահուանէ և դատաստա-
նէն։ Եկուր, և այն օրը պիտի ըլլայ քեզի ար-
շալոյս և սկիզբ կենաց և փառաց։ Ո՛հ, եկուր
ուրեմն։ Այսպիսի անձէ մը ազատուած լոկ հրաւէրը
պէտք է որ բաւական ըլլայ դարձ ուրախացու-

Գ. Բիբլիոթեկա
ՀՍՍՌ-Արմ.ՍՍՌ
Գ. Գ. Մասնաճ. Գրադարան
38666·67

նելու։ Եթէ օտարական մը ըլլար հրաւիրողը,
կրնայինք ըսել, «Թերևս բարիք չկամիր ին-
ծի։» Եթէ աղքատ մը ըլլար հրաւիրողը, կըր-
նայինք ըսել, «Չկրնար օգնել ինձ, թէպէտ
ուզէ օգնել։» Եթէ ըլլար անձնասէր հարուստ
մը՝ կրնայինք ըսել, «Ո՞վ կրնայ սպասել ան-
կէ բարիք։ Ով մեղաւոր, այն որ կը հրաւիրէ
քեզ, թէ՛ կարող և թէ՛ կամեցող է օգնել։
Ունի հանդերձներ մերկին համար, կերակուր՝
անօթիին համար, հարստութիւն՝ աղքատին
համար, յաւիտենական կեանք՝ ամենուն հա-
մար։ Անոր խօսքն անգամ թէ «Եկուր,» բա-
ւական է ուրախացունել քեզ։ Ճամբուն քով
կոյր մուրացկան մը լսելով թէ կ'անցնի Յի-
սուս, աղաղակեց, «Ողորմէ՛ ինծի, ողորմէ ին-
ծի։» Ժողովուրդն ըսաւ որ լռէ, բայց նա աւելի
բարձր աղաղակեց, «Ողորմէ՛ ինծի։» Յիսուս
կանչեց զնա, և այն ատեն ոմանք ըսին, երբ
թէ որպէս զի կոյրը բոլորովին վստահ ըլլար
թէ պիտի ընդունէր օրհնութիւն, «Քաջ ե-
ղիր, ելիր, քեզ կը կանչէ։» Անոնք գիտէին
թէ Յիսուս բնաւ չէր կանչեր և յետոյ մեր-
ժեր, վասն որոյ ըսին կոյրին որ ուրախանայ։
Մեղաւոր, ուրախ եղիր. նոյն Յիսուսն է որ
կը կանչէ քեզ։ Ինչպէս որ կոյրը մէկդի նետեց
իւր հանդերձը որպէս զի այն արգելք չըլլար
իրեն, նետէ վրայէդ ամէն մեղք որ արգելք
կ'ըլլայ քեզի. վազէ ամէն դժուարութեանց

52143-Ա.Ա.

ամբոխին մէջէն, և իյնալով Յիսուսի ոտքը, ըսէ, "Ողորմէ ինծի, ես կոյր եմ, ես կորսուած եմ, աղատէ զիս", եթէ ոչ՝ կը կորսուիմ։" Շա՞տ մեծ մեղաւոր ես։ Ուրեմն աւելի պէտք ունիս դալ Յիսուսի։ Խայթող խի՞ղճ ունիս։ Եկուր այդ խայթող խիղճովդ։ Զար սի՞րտ ունիս։ Եկուր այդ չար սրտովդ։ Զունի՞ս բան մը որով դնես անոր բարիքները։ Եկուր "առանց ստակի։" Հարուստներ և աղքատներ, տէրեր և ծառաներ, ծերեր և երիտասարդներ, սպիտակ և սեւամորթ մարդիկ, և ամէն կարգէ մեղաւորներ, Եկէք։

Կարդա ես. Ծե., Մատթ. Ը. 1—17, ԺԱ. 28, 30, Մարկ. Դ. 46—52, Յայտ. ԻԲ. 17։

"ԻՆՁՈ՞Ի ՀԱՄԱՐ ՅԻՍՈՒՍԻ ԴԱԼՈՒ ԵՄ։"

ԴՈՒՆ ՄԵՂԱՒՈՐ ԵՍ, ԵԿՈՒՐ ՈՐ ԹՈՂՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆԻՍ

Թերևս չես ղդար թէ մեղաւոր ես դուն։ Դէթ կը կարծես թէ ուրիշներէ աւելի չար չես, բայց շատերէն աղէկ ես։ Դուն չես գինով, գող, ինացող, հապա կը պահես Կիրակին, կը կարդաս Աստուածաշունչը, և կ'երթաս Աստուծոյ տունը։ Բայց իրա՞ւ հնազանդած ես բոլոր պատուիրաններուն։ Բնաւ չկոտրեցի՞ր անոնցմէ մէկը։ Միշտ խօսեցա՞ր ճշմարիտ. եղա՞ր մաքուր, պարկեշտ, համեստ, ներող և քաղցր։ Բնաւ չեղա՞ր հպարտ, չարակամ, բար-

կասիրտ, խաբեբայ կամ ցանկացող։ Աստուած կը պահանջէ քենէ ըլլալ սուրբ սրտիւ, ինչպէս բարի՝ արտաքին վարքով, և նա գիտէ բոլոր մեր խորհուրդները։ Ուրեմն բնաւ չե՞ս ունեցած մեղաց խորհուրդ քու սրտիդ մէջ, թէպէտ դրսուանց զայն գործել համարձակած չես։ Դարձեալ. առաջին և գլխաւոր պատուիրանն է սիրել Տէրը, մեր Աստուածը, մեր բոլոր մտքով և զօրութիւնով։ Միշտ ըրա՞ծ ես զայս. միշտ շնորհակալ եղա՞ծ ես անոր ողորմութեանց համար. միշտ խնամով կարդացա՞ծ ես անոր խօսքը զայն պահելու համար. միշտ ջանացա՞ծ ես հաճեցուցնել զնա. սիրա՞ծ ես զնա և աղօթա՞ծ ես անոր. զուարճութիւն սեպա՞ծ ես անոր օրը. սիրա՞ծ ես անոր ժողովուրդը, անոր պաշտամունքը. միշտ ջանացա՞ծ ես ըլլալ "սուրբ ինչպէս որ անիկա սուրբ է," ճանչցուցնել անոր ճշմարտութիւնը, յորդորել ուրիշները՝ սիրել զնա, և ջանացա՞ծ ես ամէն բանի մէջ փառաւորել զնա։ Եթէ միշտ ըրա՞ծ ես այս բաները, տակաւին միայն քու պարտականութիւնդ կատարա՞ծ ես, և չունիս պարծենալու բան մը։ Բայց դուն չըրիր այս բաները. խիղճդ այսպէս կ'ըսէ քեզի։ Դուն գիտես որ մեղանչած ես հաղարաւոր անգամ։ Դուն գիտես որ վնտռա՞ծ ես քու հաճոյքդ, և քու լաւագոյն գործոցդ մէջ անգամ շարժառիթդ չէր փափաք զԱստուած հաճեցունե-

լու։ Աղրած ես քու անձիդ համար, փնտռած ես զմարդիկ հաճեցունել, բայց զԱստուած ուշնեցած չես քու բոլոր խորհուրդներուդ մէջ։ Սուրբ Գիրքը կ'ըսէ, «Թէ որ ըսենք թէ մենք մեղք մը չունինք, ինքզինքնիս կը խաբենք։ Արդար մը չկայ՝ ոչ մէկ հատ մը։ Ամէնքը մեղք գործեցին և Աստուծոյ փառքէն պակսած են։» Ո՛վ մեղսակից իմ, ճշմարիտ չէ՞ այս խօսքը քեզի համար։ «Ան Աստուածը՝ որուն ձեռքն է քու շունչդ, և որուն են քու ամէն ճամբաներդ, չփառաւորեցիր։» Դուն մեղաւոր ես։ Ծանր մեղքերով բեռնաւորուած ես։ Աստուծոյ Գիրքին մէջ գրուած են բոլոր քու մեղքերդ։ Չես կրնար աղատուիլ անոնցմէ։ Եթէ աշխատէիր հազարաւոր տարիներ, պիտի չըլլայիր կարող քաւել անոնց փոքրագոյն մասն իսկ։ Ինչ որ կարող ըլլայիր ընել, պիտի ըլլար քու պարտականութիւնդ միայն։ Եթէ վճարէիր այս օրուան պարտքդ, տակաւին կը մնար երէկուան պարտքդ ինչ որ էր։ Եւ եթէ քու բոլոր ստացուածքդ տայիր, կամ չարչարանք կրէիր և մեռնէիր, չէիր կրնար աղատուիլ մեղքերէդ։ Անցեալը կարելի չէ, ետ կանչել։ Բայց յանցաւորին համար կայ թողութիւն ձրի, կատարեալ և յաւիտենական։ Ով մեղաւոր, Յիսուս ունի քեզի համար թողութիւն զոր գնած է բուն իւր արեամբ։ Եկուր ընդունէ զայն։ Եկուր Յիսուս Քրիստոսի և ընդունէ զայն։

Կարդա Եղ. Ի. 1—18, Սաղմ. ԾԱ., ՃԼԹ., Մատթ. Ե., Հռովմ. Գ. 10—20, 23, Ա. Յովհ. Ա. 8—10։

ԱՍՏՈՒԱԾ ԲԱՐԿԱՑԱԾ Է ՔԵԶԻ, ԵԿՈՒՐ ՀԱՇՏՈՒԷ ԱՆՈՐ ՀԵՏ

Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Աստուած մեղաւորին ամէն օր բարկացած է,» «Բոլոր անօրէնութիւն գործողները կ'ատէ։» Եւ, ով մեղաւոր, ո՞չ ապաքէն Աստուած շատ պատճառ ունի բարկանալ քեզի։ Նա տուաւ քու կեանքդ և կարողութիւններդ, և կը պահպանէ զանոնք, և կուտայ քեզի ամէն մխիթարութիւններդ։ Սակայն կը մոռնաս զնա։ Պատուիրանները տուած է քեզի. և անոնց բոլորին նպատակն է բարիք քեզի, բայց դուն ուշադրութիւն չես ըներ անոնց։ Չես մեծարեր զԱստուած, այլ կ'ապրիս այնպէս իբր թէ չկայ այսպիսի էակ մը։ Որպիսի՜ ապերախտ որդի մը պիտի ըլլայիր եթէ այսպէս վարուէիր երկրաւոր ծնողացդ հետ, այսինքն՝ եթէ հեռանայիր անոնց քովէն, չուզէիր խորհել անոնց վրայ, և ուշադրութիւն չտայիր անոնց կամքին։

Լսէ ուրեմն թէ ի՛նչ կ'ըսէ Աստուած. «Լսէ ով երկինք, և ականջ դիր ով երկիր. զաւակներ մեծցուցի ու բարձրացուցի, և անոնք ինծի դէմ ապստամբեցան։» Սիրով լեցուն է նա դէպի քեզ, իբրև գորովագութ Հայր,

բայց քու մեղքերովդ վշտացուցիր զնա։ Բայց աստի նա է քու Արարիչդ, Թագաւորդ, և արդար Դատաւորդ, և ի հարկէ պիտի պատժէ բոլոր մեղաւորները։ Պիտի վարուի ապըստամբաց հետ ոչ իբրև դթած հայր, այլ իբրև բարկացած Թագաւոր։ Բայց բուն իսկ քու յանցանացդ համար բարկացած է։ Դուն բարկացուցիր զնա։ Քու մեղքերդ բաժանում կը ձգեն քու և Աստուծոյդ մէջտեղ։ Ցորչափ կ'ապրիս առանց ապաշխարելու մեղացդ վրայ, անոր բարկութիւնը միշտ բորբոքեալ պիտի մնայ քեզի դէմ, ով մեղաւոր, և դուն չես կրնար փախչիլ կամ ծածկուիլ անոր երեսէն։ Ուր որ ես, հոն է նա, և է բարկացած։ «Նա կը քննէ քու շաւիղդ ու պառկելդ,» և բարկացած է։ Անկէ կախեալ է նոյն իսկ քու յաջորդ շունչդ շնչելդ կամ չշնչելդ, և բարկացած է։ Ով մեղաւոր, աւելի աղէկ էր որ բոլոր աշխարհ բարկանար քեզի քան թէ Աստուած։ Ի՞նչ ահաւոր է քու կեանքդ։ «Աստուծոյ բարկութիւնը քու վրադ կը մնայ։» Ի՞նչ սոսկալի բան է զգալ անկողին մտած ժամանակդ թէ «Աստուած բարկացած է» քեզի, արթննալ և գիտնալ թէ «Աստուած բարկացած է,» ուր որ երթաս և ինչ որ ընես, «Աստուած բարկացած է։» Եւ ո՛հ, մեռնել՝ գիտնալով թէ «Աստուած բարկացած է,» և կենալ Անոր դատաստանի աթոռին առջևը և

դեռնել թէ նա բարկացած է քեզի։ Մեղաւո՛ր, Աստուած այն ատեն միայն կը բարկանայ՝ երբ դուն կը բարկացուցնես զայն. նա յօժար է բարեկամ ըլլալ քեզի. ղրկեց իւր Որդին սա պատգամով, «Հաշտուեցէք Աստուծոյ հետ։» Եթէ քու սիրտդ տաս այն Դեսպանին, և ապաւինիս անոր, բոլոր այս բարկութիւնը պիտի դադարի։ Ո՛հ, ուրեմն եկո՛ւր Յիսուսի։ Այլ ես մի ըլլար Աստուծոյ թշնամին, այլ ընդունէ անոր առաջարկութիւնն՝ ըլլալ անոր բարեկամը։ Բայց ղդուշացիր Յիսուս մերժելէ, վասն զի նա կ'ըսէ, «Ան որ Որդիին չհնազանդիր,» այսինքն չդար Որդիին, «անիկա կեանք պիտի չտեսնէ. հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ։»

Կարդա Յովհ. Գ. 36, Սաղմ. Է. 11, Ե. 5, 6, Ի. 8, 9, Հռովմ. Ա. 18, Բ. 5—9, Բ Կոր. Ե. 18, 21, Եփես. Ե. 6, Բ Թես. Ա. 7—9։

ԴԺՈԽՔԸ ՔԵԶԻ ԿԸՍՊԱՍԷ, ԵԿՈՒՐ ՈՐ ՓՐԿՈՒԻՍ

Դժոխքը մտացածին բան չէ եկեղեցականներէն հնարուած, վախցունելու համար զմարդիկ, այլ այնչափ ստոյգ է որչափ Աստուածաշունչն է Աստուծոյ խօսքը. ստոյգ է թէ «Ամբարիշտները դժոխքը պիտի դառնան, և ամէն ազգերը որ զԱստուած կը մոռնան։» «Մարդոյ սահմանուած է մէկ անգամ մը մեռնիլ, ու անկէ ետքը դատաստան։» Ուրեմն ա-

մէն մարդ հաշիւ պիտի տայ «իր մարմնովը ը-
րածներուն» համար։ «Աստուած մարդոց ծա-
ծուկ բաները պիտի դատէ։» Այն ատեն բո-
լոր մեղաւորք որ թողութիւն չեն ընդունած
գալով Յիսուսի, պիտի դատուին Դատաւորին
ձախ կողմը, և նա պիտի տայ ահաւոր վճիռ
անոնց դէմ, «Մէկ դի գացէք լնծմէ, անիծ-
եալներ, յաւիտենական կրակին մէջը՝ որ պատ-
րաստուած է Սատանային ու իր հրեշտակնե-
րուն։» Ո՞հ, ո՞վ կարող է պատմել այն տեղոյն
չարչարանքները։ Հոն չկայ այլ ևս ցերեկուան
հաճելի լոյսը, չկայ բարեկամաց զուարթարար
ձայնը, չկայ տան ընծայած մխիթարութիւն-
ները, չկան այլ ևս աշխարհիս և մեղաց հա-
ճոյքները։ Հարուստը չկրնար իւր հետ տանել
մաս մը իւր հարստութենէն, և ոչ զբօսասէր
մարդը՝ իւր զբօսանքներէն։ Խիղճը կը խայթէ
իւր խայթոցով, անցեալ ժամանակին մէջ գոր-
ծուած մեղքերը կը յիշուին, և ազատութեան
համար անցեալ պատեհութիւնները հիմա գա-
ցած են յաւիտեան։ Ո՞հ, երանի՜ թէ անոնցմէ
մին դառնար եւ։ Ո՞հ, երանի՜ թէ կիրակի մը
ևս ըլլար։ Ո՞հ, երանի՜ թէ ըլլար ողորմութեան
համար աղօթելու ժամ մի ևս։ Բայց յայնժամ
շատ ուշ պիտի ըլլայ։ Յաւիտեան պիտի ըլլայ
խաւար, յաւիտեան մեղք, յաւիտեան վայ,
յաւիտեան մահ։ Յիսուս կը կոչէ այն վիճակը
«կրակով ու ծծումբով վառած լիճ — դուրսի

խաւարը, ուր պիտի ըլլայ լալ ու ակռաներ
կճռցընել— ուր որ անոնց որդը չմեռնիր, ու
կրակը չմարիր,» — ուր չար հարուստը տան-
ջանքի մէջ ըլլալով աղաղակեց, «Խրկէ Ղա-
զարոսը, որ իր մատին ծայրը ջուրը թաթխէ,
ու զովացընէ իմ լեզուս. ինչու որ աս բոցիս
մէջ կը տանջուիմ։» «Ան որ աղտոտ է ալ աղ-
տոտ պիտի ըլլայ,» «և անոնց տանջանքին ծու-
խը կ'ելլէ յաւիտեանս յաւիտենից։» Ի՞նչ
թշուառութիւն կրնայ ըլլալ աւելի մեծ քան
որչափ կը ցուցնեն այս բառերը։ Ուրեմն ի՞նչ-
պէս սոսկալի է ըլլալ դժոխքին մէջ։ Ի՞նչ կայ
աւելի սարսափելի քան զայն։ Եւ ամէն մե-
ղաւոր որ իւր մեղաց թողութիւն ընդունած
չէ, հո՞ն կը դիմէ։ Դո՜ն, որ հիմա կը կարդաս
այս երեսը, եթէ մեղացդ թողութիւն չես ըն-
դունած, դո՜ն կ'երթաս հոն։ Ամէն ժամ քեզ
աւելի կը մօտեցունէ անոր։ Եթէ անգամ մը
հոն իյնաս, այլ ևս ամէն յոյս կ'երթայ յա-
ւիտեանս։ Բայց միթէ չկա՞յ ազատութիւն։
Այո, կայ մէկ ճամբայ և միայն մէկ ճամբայ։
Փախի՛ր Յիսուսի։ Նա եկաւ աշխարհ՝ ազատել
դժոխքէն զմարդիկ։ «Աստուած անանկ սիրեց
աշխարհը մինչև որ իր միածին Որդին տուաւ,
որ ամէն ոմանք անոր հաւատայ, չկորսուի, հա-
պա յաւիտենական կեանք ունենայ։» Բան մը
չկրնար փրկել քեզ եթէ չես դար Յիսուսի,
բան մը չկրնար արդելել քու փրկութիւնդ,
եթէ կու գաս Անոր։

Կարդա Մատթ. ԺԸ. 1—13, Գլուխ ԻԵ., Մարկ. Թ. 43—48, Ղուկ. ԺԶ. 19—31, Յայտ. ԺԱ. 10, 11, Ի. 11—15, ԻԲ. 11—15,

ԵԿՈՒՐ, ՈՐ ԹՂՃԻ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱՍ

«Ամբարիշտները խաղաղութիւն պիտի չունենան, կ'ըսէ իմ Աստուածս։» Կան մեղաւորներ որ կ'երևի թէ խաղաղութեան մէջ են, բայց պատճառը անոնց խորհելու դժկամակութիւնն է։ Զեն կամիր մտածել։ Բայց այսպիսի չխորհելը արժանի չէ կոչուիլ խաղաղութիւն։ Ինչպէս մարդ մը որ ընկղմելու վրայ եղող նաւու մէջ կը դտնուի, բայց չքններ թէ ինչ է վտանգը, կամ վաճառական մը որ կը խորհի թէ իւր բոլոր գործերը աղէկ չեն երթար, բայց չնայիր իւր հաշիւները որպէս զի չըլլայ որ իւր միտքը անհանգիստ ըլլայ, այսպէս նաև մեղաւորը կը խորհի թէ կայ դէշ բան մը, և վախնալով որ չըլլայ թէ վրդովի իւր խաղաղութիւնը, մէկ դի կը վանէ իւր մտքէն խորհելը Աստուծոյ և իւր հոգւոյն վրայ։» Սակայն ամէն մեղաւոր կը խորհի երբեմն, և ուստի թշուառ կ'ըլլայ։ Երբ մահ կը պատահի դրացւոյն տունը, կամ բուն իսկ անոր տունը, և կամ անոր անձին կը սպառնայ, և շատ ուրիշ ժամանակներ ևս, սա խորհուրդը կու գայ անոր միտքը. «Աստուած բարկացած է ինծի. հոգիս վտանգի մէջ է. ես պատրաստ չեմ

մեռնելու։» Եւ ահա այսպիսի խորհուրդ մը ի՞նչպէս կը խանգարէ անոր զուարթութիւնը, և կը վրդովէ անոր խաղաղութիւնը։

Ո՛չ. դուն չես կրնար խաղաղութիւն ունենալ մինչև որ չընդունիս թողութիւն մեղաց։ Կրնաս փորձել աշխարհիս բոլոր հաճոյքները մի առ մի, կրնաս խորհուրդներդ մէկ դի վանել մեղաց մէջ խոր ընկղմելով, բայց չես կրնար ըլլալ երջանիկ։ Սակայն երբ կու գանք Յիսուսի, մեր բոլոր մեղքերը կը ներուին իսկոյն։ Տակաւին կը խորհինք անոնց վրայ ցաւով, բայց պէտք չունինք այլ ևս խորհել անոնց վրայ երկիւղով։ Աստուած կ'ըսէ մեզի, «Ձեր մեղքերը և անօրէնութիւնները ալ պիտի չյիշեմ։» Կը ջնջէ «բոլոր յանցանքները։» «Կը նետէ զանոնք իւր ետևը, ծովին անդունդը։» Պիտի չյիշուին անոնք դատաստանին օրը։ «Անիկա առատապէս կը ներէ։» Հիմա սիրով կը նայի մեզի։ Մենք պէտք չէ որ վախնանք անկէ։ Կը հրաւիրէ զմեզ վստահել իրեն ինչպէս քաղցր բարեկամի մը։ Փոխանակ ծածկուելու պահուրտելու անկէ, ինչպէս ըրաւ Ադամ, մենք պարտիմք ապաստանիլ անոր քով, ինչպէս կ'ընէր Դաւիթ, ըսելով, «Դուն ես իմ ապաստանարանս։» Ո՜հ, ի՞նչ երջանիկ փոփոխութիւն։ Ես մեղաւոր եմ տակաւին, բայց մեղաւոր՝ որուն մեղքերը ներուած են, որ հաշտուած է Աստուծոյ հետ, որ փերը-

կուած է։ Եւ խիղճս ինչ սոսկալի բաներ ալ որ ըսէ ինձ, Յիսուս կ'ըսէ, «Քու մեղքերդ ներուած են քեզի, գնա խաղաղութեամբ։» «Խաղաղութիւն կը թողում ձեզի, իմ խաղաղութիւնս կու տամ ձեզի։» «Հաւատքով արդարացած ըլլալով, խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքովը։» Խեղճ մեղաւոր, դուն և խաղաղութիւնը շատ ժամանակէ հետէ օտար էք իրարու։ Աշխարհային հաճոյքը խաղաղութիւն չէ, և զայն բանով մը չես կրնար ձեռք բերել մինչ դուն և Աստուած թշնամի էք իրարու և քու մեղքերդ կը ճնշեն հոգւոյդ վրայ։ Ուրեմն եկուր Յիսուսի։ Նա թէ՛ կ'ընէ խաղաղութիւն և թէ՛ կու տայ խաղաղութիւն։ Խնդրէ թողութիւն անոր անուամբ, և շուտով պիտի հասկնաս թէ ինչ կը նշանակէ «Աստուծոյ խաղաղութիւնը որ ամէն մտքէ վեր է։»

Տես Եսայ. Ծե. 7, Ծէ. 21, Միք. Է. 18, 19, Յովհ. ԺԴ. 27, Հռովմ. Ե. 1, Ը. 31—34, Փիլիպ. Դ. 7։

ԵԿՈՒՐ, ՈՐ ՆՈՐ ՍԻՐՏ ՈՒՆԵՆԱՍ

«Պէտք է ձեզի նորէն ծնանիլ,» ըսաւ Քրիստոս Նիկոդեմոսի։ Պէտք է ըլլայ մեծ փոփոխութիւն մեր խորհրդոյ և զգացմանց մէջ դէպ Աստուած՝ երկրի վրայ անոր ծառայելու և երկնից մէջ զնա վայելելու կարող ըլլալէ

առաջ։ Մեղքը օտարացուցած է մեր միտքերն Աստուծմէ, այնպէս որ չենք փափաքիր անոր և ոչ կը սիրենք զնա։ Ճշմարիտ կրօնքը սիրելի չէ մեզի։ Այս է ըլլալ «մտքով մարմնաւոր որ է մահ։» Սիրել այն բաները որ մեղքը կ'ընեն զզուելի, է մեծ փոփոխութիւն, մեռելներէն յարութիւն առնելու նման։ Կը կոչուի այն վերստին ծնունդ, կամ նորոգութիւն։ «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, թէ որ մէկ մարդ մը ջուրէն ու Հոգիէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտանել։» Ով անդարձ մեղաւոր, ի՞նչպէս կրնաս ակնկալել մտնել երկինք։ Դուն երջանիկ պիտի չըլլաս հոն։ Օդը սիրելի է ծիծեռնիկին, և մարգագետինը՝ կովուն, բայց ձուկը շուտով կը նուազի հոն և կը մեռնի։ Երկինք մտնելու համար պէտք է յարմար ըլլալ անոր։ Երաժշտութիւնը կը զմայլեցուցնէ անոնք միայն որ ականջ ունին անոր. գիրքերը չեն տար հաճոյք անոնց որ կ'ատեն կարդալը։ Եւ ընկերութիւնը այն ատեն միայն հաճելի է երբ անոր անդամք մի և նոյն զգացումները կը կրեն։ Գռեհիկ անձ մը հանգիստ չըլլար պալատան մէջ, և տգէտը համ չառնուր գիտնոց ընկերութենէն, անառակը չսիրեր առաքինիներուն ընկերութիւնը, և ճիշդ այսպէս ամբարիշտը չկրնար հաճոյք զգալ կրօնքէն։ Զէ՞ որ հանդստութեան օրը քեզի տխուր օր է, Աստ-

ուածաշունչը՝ ցամաք գիրք, կրօնական խո-
սակցութիւնը՝ անհաճոյ, աղօթքը՝ ծանր բեռ,
և բարեպաշտից ընկերութիւնը՝ զզուելի։ Բայց
երկնից մէջ միշտ հանդստութեան օր է, միշտ
պաշտամունք, միշտ սրբութիւն. անոր բոլոր
բնակիչներն են արդար, և անոնց բոլոր խոս-
քերը և գործերը կը վերաբերին Աստուծոյ։
Երկինքը երջանիկ է, վասն զի սուրբ է, և
վասն զի Աստուած հոն է։ Բայց եթէ չես սի-
րեր սրբութիւն և զԱստուած, երկինքը երջա-
նիկ տեղ մը պիտի չըլլայ քեզի։ Դուն պիտի
թափառիս թշուառ և միայնակ, ուրելով վա-
յելքը որում չես ըլլար մասնակից, ապակա-
նելով տաճարը յորում դու միայն անկարող
պիտի ըլլաս երկիր պագանել։ Վասն որոյ թէ
որ նորէն չծնանիս, բնաւ պիտի չմտնես ներս։
Գիտեմ որ չես կրնար փոխել քու սիրտդ,
զայդ կրնայ ընել Աստուծոյ Հոգին միայն։ Եւ
Յիսուս մեռաւ ստանալ մեզի համար Հոգւոյն
պարգևը։ Եւ այս պարգևը ձրիապէս կը տրուի
բոլոր անոնց որ անկեղծութեամբ կը դիմեն
փրկչին զայն խնդրելու համար։ Ո՛հ, ուրեմն
ջերմեռանդութեամբ աղօթք ըրէ Աստուծոյ
Հոգւոյն համար, որպէս զի նորէն ծնանիս։ Ե-
կուր Յիսուսի՝ Դաւթի աղօթքն ընելով, "Ով
Աստուած՝ իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ, և
իմ ներսի դիս ուղիղ հոգի նորոգէ։" Եւ որ-
պէս զի քաջալերուիս, խորհէ Քրիստոսի սա

խրախուսիչ խօսքին վրայ. "Եթէ դուք որ չար
էք՝ ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ
գիտէք, որչափ աւելի ձեր Հայրը երկինքէն
Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որ իրմէ կը
խնդրեն։"

Կարդա Յովհ. Գ. 1—21, Հռովմ. Ը. 5—9,
Եփես. Բ. 1—6, Սաղ. ԾԱ. 10—12, Ղուկ.
ԺԱ. 1—13։

ԵԿՈՒՐ, ՈՐ ՎԱՅԵԼԵՍ ՈՐԴԵԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆՑ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երբեմն հարուստ մարդիկ կ'առնուն աղքա-
տայ տղաքը և կը մեծցունեն զանոնք իբրև ի-
րենցը։ Այս կը կոչուի ուրեէբել։ Եւ Աստուած
այսպէս կը նկարագրէ իւր վարմունքը դէպ առ
Յիսուս եկողները. "Դուք ինծի տղաքներ ու
աղջիկներ պիտի ըլլաք՝ կ'ըսէ Ամենակալ Տէ-
րը։" "Որդեգրութեան Հոգին առիք, որ ա-
նով կը կանչենք Աբբայ Հայր։" Արտօնութիւն
տրուած է մեզ աղօթքի մէջ ըսել Աստուծոյ,
"Ով Հայր մեր, որ երկինքն ես։" Կը սիրէ նա
այն որդեգրեալ տղաքները աւելի սիրով քան
որչափ կ'ունենայ երկրաւոր ծնողմը։ Կը կրթէ,
կը հսկէ, կը մխիթարէ, կը կերակրէ և կը պաշ-
պանէ զանոնք։ Վիշտերը անոր ուղղած քաղցր
յանդիմանութիւններն են անոնց բարիք ընելու
նպատակաւ։ "Թէ որ խրատի համբերէք, Աստ-
ուած ձեզի հետ՝ որպէս զի որդիներու հետ կը

38666-67

ՀՍՍՌ Գրադարան
ZUUՌ-Арм.ССР
Ս. Մեսրոպի անվան
Ս. им. А. Мясникяна

վարուի. քանզի՞ որդին է ան՝ որ հայրը չպատ-
ժեր զանիկա։" Անոնց բոլոր փորձութեանց մէջ
կը մխիթարէ զանոնք։ "Ինչպէս որ հայր մը կը
գթայ իր որդւոցը վրայ, այսպէս ալ Տէրը կը
գթայ իրմէ վախցողներուն վրայ։" "Ինչպէս որ
մէկ մայր մը իր տղան կը մխիթարէ, այնպէս
ալ ես ձեզ պիտի մխիթարեմ։" Հիւանդու-
թիւնք, աղքատութիւնք, զրկանք, և անոնց
բոլոր նեղութիւնները կը զրկուին անոնց օգ-
տին համար։ "Ամէն բաները բարիի գործա-
կից կ'ըլլան անոնց որ Աստուած կը սիրեն։"
"Տէրը փնտռողներուն բարութիւն մը պակաս
պիտի չըլլայ։" "Քեզի դէմ շինուած գործիք
ը ամենևին պիտի չյաջողի։" Ամէն դժուա-
րութեան և վտանգի մէջ անոնց Հայրը անոնց
քովն է։ "Մի վախնար, վասն զի ես քեզ
փրկեցի, քեզ քու անունովդ կանչեցի. դուն
իմն ես։ Երբոր ջուրերէն անցնիս՝ ես քեզի
հետ պիտի ըլլամ, ու երբոր գետերէն անց-
նիս՝ քեզ պիտի չկոխեն։" "Քեզ պիտի չթո-
ղում ու քեզ անտես պիտի չընեմ։" Անոնք
կրնան պատմել իրենց Հօրը իրենց բոլոր կա-
րօտութիւնները։ "Ամէն բանի մէջ. . . ձեր
խնդրուածքը Աստուծոյ յայտնի ըլլայ։" Աս-
տուծոյ ականջները միշտ բաց են լսել անոնց
աղաղակին, և անոր ձեռքը միշտ երկնցած է
անոնց բարիք ընելու համար։ Հօր մը պէս կը
պատրաստէ անոնց ժառանգութիւն մը, բայց

աննման երկրաւոր ժառանգութեանց՝ այն ժա-
ռանգութիւնն է "անեղծ ու անարատ և ան-
թառամ։" Ո՜հ, ի՜նչ երանութիւն՝ ըլլալ զա-
ւակ Աստուծոյ։ Զգալ՝ "Աստուած իմ Հայրս
է։ Նա կը սիրէ զիս, կը գթայ իմ վրաս, կը
ներէ ինձ և կը պահէ զիս։ Եւ ապահով եմ
ամէն չարիքէ։ Զար մարդիկ, չար ոգիները
չեն կրնար ջնասել զիս։ Աստուած է իմ ա-
պաստանարանս, միշտ մօտ ինձ, բնաւ չմրա-
փեր, բնաւ չյոգնիր, բնաւ չմոռնար, և բնաւ
պիտի չփոխուի։ Կ'ըսէ նա, "Քեզ յաւիտենա-
կան սիրով սիրեցի։" Նա միշտ իմ քովս պիտի
ըլլայ մինչ կը ճամբորդեմ հոս, և ի վերջոյ պի-
տի առնու զիս բնակել անոր հետ իւր պալա-
տին մէջ յաւիտեան։" Երկրաւոր ի՞նչ մեծու-
թիւն կը հաւասարի սոր։ Ընթերցող, կ'ու-
զե՞ս ըլլալ զաւակ Աստուծոյ։ Կրնաս ըլլալ ե-
թէ դաս ցիսուսի, վասն զի "որոնք որ զինքը
ընդունեցին," այսինքն՝ եկան անոր, "անոնց
իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլ-
լալու։"

Տես Սաղ. ՂԱ., ցովհ. Ա. 12, 13, Հռովմ.
Ը. 14—17, Բ Կոր. Զ. 17, 18, Եբր. ԺԲ. 5—
12, Ա. ցովհ. Գ. 1, 2։

ԵԿՈՒՐ ՈՐ ԵՐԿԻՆՔ ՄՏՆԵՍ

Ինչպէս որ պատժոյ տեղ մը կայ չարերուն
համար, նոյնպէս նաև փառաց երկինք մը կայ

այն ամենուն համար որ կու գան Յիսուսի։ Աստուած իւր մեծ սիրովն առ մեղաւորս՝ զրկեց իւր Որդին ոչ միայն զանոնք աղատելու համար դժոխքէն, բայց նաև երջանիկ ընելու համար և փառաւորելու համար իրեն հետ յաւիտեան։ Երբ հաւատացեալը կը մեռնի, թէպէտ կը փտի անոր մարմինը, հոգին անմիջապէս կ'երթայ Յիսուսի քով, որ "շատ աւելի աղէկ է։" Ի՞նչպէս զմայլելի է Սուրբ Գրոց ըրած նկարագրութիւնը երկնից վրայ։ Կը կարդանք թէ հոն բնաւ չմոներ հիւանդութիւն, վիշտ, և մահ։ Թէ հոն բնաւ ծանօթ չէ աղքատութիւն, զրկում, տմարդութիւն և յոյսն ի դերև ելլել։ Մարմինը որ պիտի ելլէ դերեզմանէն, պիտի ըլլայ "անապական," բնաւ պիտի չքաշէ ցաւ, յոգնութիւն, և բնաւ ենթակայ պիտի չըլլայ փտութեան։ Ծերութիւնը բնաւ պիտի չբերէ տկարութիւն, վասն զի հոն պիտի ըլլայ մշտնջենաւոր երիտասարդութիւն, և մահը բնաւ պիտի չյաջողակէ մենէ մեր սիրելիները, վասն զի նոյն իսկ մահը պիտի մեռնի։ Եւ որ աւելի լաւագոյն է, այլևս պիտի չկենայ մեղք, բայց ամէն սիրտեր պիտի լեցուին սուրբ սիրով առ Աստուած և առ միմեանս։ Իրաքանչիւր ոք պիտի ուրախանայ այլոց ընկերութեամբ և երջանկութեամբ, և Աստուած ինքն պիտի բնակի անոնց մէջ։ Հոն պիտի ըլլան

նախնի դարուց բոլոր բարի մարդիկ, այսինքն՝ մարտիրոսք, առաքեալք և մարգարէք։ Պիտի վայելենք նաև ընկերութիւնը հրեշտակաց և հրեշտակապետաց, առաւել քան զամենայն՝ պիտի տեսնենք զՅիսուս իւր փառաւոր մարդկային մարմնով, պիտի տեսնենք անոր երեսը, և "յաւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք։" Ցուցնելու համար թէ երկինքն ինչպէս փառաւոր է, կը նմանցուի քաղաքի մը որուն փողոցներն են ոսկի, դռները՝ մարգարիտ, և պարիսպները՝ յասպիս և զմրուխտ։ Կը նմանցուի դրախտի մը՝ որ ունի ակնվանիի պէս պայծառ գետ, և կենաց ծառը՝ բժշկութիւն ընող տերևներով։ Կը նմանցուի հանգստեան տեղւոյ մը՝ աշխատութենէ ետքը։ Կը նմանցուի հօր մը տան, և երջանիկ բնակարանի։ "Ինքնք ցնծութիւն և ուրախութիւն պիտի ստանան. և տրտմութիւնը ու հեծութիւնը անոնցմէ պիտի հեռանայ։ Ինքնց գլխուն վրայ յաւիտենական ուրախութիւն պիտի ըլլայ։ Երեսիդ առջին լեցուն ուրախութիւն կայ. քու աջ կողմդ միշտ հաճութիւններ կան։" Երկրիս ամենէն լաւ ուրախութիւնները կ'անցնին շուտով։ Հարստութիւնը կը թռչի, առողջութիւնը կ'աւրի, բարեկամք կը մեռնին, մահ գերուած է ամէն բանի վրայ։ Բայց երկնից ուրախութիւնք անվախճան են։ Ընթերցող, այս երկինքը կրնայ ըլլալ քուկդ։ Յիսուս կը կե-

նայ դրան քով, բայց լայն բացած է զայն բոլոր մեղաւորաց համար որպէս զի ներս մտնեն։ Եթէ չես կամիր գալ Յիսուսի, չես կրնար մտնել երկինք. վասն զի Յիսուս է դուռը, մի միայն դուռը։ Բայց նա կը հրաւիրէ քեզ որ գաս։ Այո, թէպէտ մեղաւոր ես դուն և անարժան, երկինքը քուկդ կրնայ ըլլալ և պէտք ըլլայ, եթէ գաս Յիսուսի։ "Աս փրկութեան խօսքը ձեզի խրկուեցաւ։" Ո՛հ, ուրեմն, երկնային օրհնութիւնը ժառանգելու համար եկո՛ւր Յիսուսի։

Տես Յովհ. ԺԴ. 1—6, Ա. Կոր. ԺԵ., Բ Կոր. Դ. 17, 18, Ե. 1—4, Յայտ. Գլ. ԻԱ., ԻԲ.։

Ո՞Վ Է ՅԻՍՈՒՍ

Այս է ամենէն կարևոր հարցումը. վասն զի ոչ ոք կրնայ ըստ արժանւոյն հասկնալ "Յիսուսի եկուր" հրաւէրին պատուականութիւնը առանց ուղիղ դիտութիւն ունենալու թէ ո՛վ է Յիսուս։ Շատ բան կախեալ է պատասխանէն զոր կուտանք սա հարցման. "Քրիստոսի վրայով ի՞նչ կարծիք ունիք։"

ՅԻՍՈՒՍ ԱՍՏՈՒԱԾ Է

Երկրի վրայ երևելէն առաջ ի յաւիտենից ուներ Աստուածութեան բոլոր կատարելութիւնները։ Ինչպէս որ Հայրն է Աստուած, նմանապէս Յիսուս է Աստուած։ Այս է մեծ

գաղտնիք մը, բայց է նաև մեծ ճշմարտութիւն։ Սուրբ Գիրքը յայտնապէս կ'ըսէ զայն։ Յիսուս կը կոչուի "Բան," և Սուրբն Յովհաննէս կ'ըսէ, "Սկիզբէն էր Բանը, ու Բանը Աստուծոյ քովն էր, և Բանը Աստուած էր։ Ամէն բան անով եղաւ, և առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ։" Նաև, "Բանը մարմին եղաւ ու մեր մէջը բնակեցաւ։" Յիսուս խօսելով իւր վրայ, ըսաւ, "Աբրահամին ըլլալէն առաջ եմ ես։" Կ'ակնարկէր այս խօսքով այն փառքը որ աշխարհի ըլլալէն առաջ ունէր Հօրը քով. և ըսաւ, "Ես ու Հայրը մէկ ենք։" Կը կարդանք թէ "անիկա [Յիսուս] իր [Հօր Աստուծոյ] փառացը լոյսն է," և "անեղեւոյթ Աստուծոյ պատկերը," թէ "Աստուած մարմինով յայտնուեցաւ," թէ "Յիսուս Քրիստոս նոյն է երէկ ու այսօր և յաւիտեանս," և թէ "անոր մէջը կը բնակի Աստուածութեան բոլոր լեցունութիւնը՝ մարմնապէս։"

Վասն որոյ Յիսուս Աստուած է, և կատարեալ է զօրութեամբ, իմաստութեամբ և բարութեամբ։ Չկայ բան մը զոր կարող չըլլայ ընել. և որովհետև բնաւ չկրնար փոխուիլ, չըլլար անհաւատարիմ իւր խոստմանց։ Արդ, խեղճ մեղաւոր, այս է ճիշդ այնպիսի փրկիչ մը որուն կարօտ ես։ Եթէ պէտք ունենայիր պաշտպանի մը մեծ վտանգի մը դէմ, պիտի դիմէիր այնպիսի մէկու մը որ զօրաւոր է։ Եւ

ոՀվ է այնպէս զօրաւոր ինչպէս Յիսուս։ Ամէն ինչ որ Աստուած կրնայ ընել, Յիսուս կրնայ ընել։ Չկան դժուարութիւնք, վտանգներ, կամ թշնամիներ զորս կարող չըլլայ յաղթել քու կողմանէդ։ Ինչ և ըլլայ քու տկարութիւնդ, Յիսուսի զօրութիւնն է ամենաբաւական։ Զէ տկար մարդ մը, և ոչ իսկ հրեշտակ որուն կ'ապաւինիս։ Այն է էակ մը յանհունս բարձր քան բոլոր ստեղծուած էակները, — մեծ Աստուածն է այն, կարող փրկելու։ Մենք պատճառ կ'ունենայինք վախնալու, եթէ սաորին էակ մը ըլլար մեր փրկիչը։ Բայց կրնանք բոլորովին ապահով ըլլալ երբ ձեռք կը զարնէ զմեզ փրկել նա որ Տէր է երկնի և երկրի։ ՈՀվ կարող է ՀԱՍԵԼ մեզ եթէ նա կը խոստանայ փրկել զմեզ։ "Թէ որ Աստուած մեր կողմն է ոՀվ պիտի ըլլայ մեզի հակառակ։" Անոր զօրութիւնը, իմաստութիւնը, սրբութիւնը, և բարութիւնը, ամէնքը կը գործածուին մեզի համար այն ինչ երբ կու գանք Յիսուսի։ Քանի որ ունինք այսպիսի Փրկիչ մը չէ՞ կրնար կորսուիլ։ "Բոլորովին կարող է ապրեցուցանելու։"

Տես Յովհ. Ա. 1—3, 14, Բ. 58, Ժ. 30, ԺԷ, 5, Կող. Ա. 14—20, Բ, 9, Ա Տիմ. Գ. 16, Եբր. Ա., Է. 23—28, ԺԳ. 8։

ՅԻՍՈՒՍ ՄԱՐԴ Է

Յիսուսի մարդ ըլլալն այնպէս ճշմարիտ է ինչպէս անոր Աստուած ըլլալը։ Աստուած ա-

նանկ սիրեց աշխարհը մինչև որ իր միածին Որդին տուաւ։" Եւ Յիսուս, թէպէտ "Աստուծոյ հաւասար" է, "ծառայի կերպարանք առնելով՝ մարդոց նման ըլլալով, կերպարանքովը մարդու պէս" գտնուեցաւ։ Անոր համար գուշակուեցաւ թէ "վշտաց տէր" պիտի ըլլար, և նա յաճախ կը կոչէ զինք "Որդի մարդոյ։" Ինք մարդ եղաւ որպէս զի հնազանդէր այն օրէնքին զոր կոտրած էինք, և կրէր պատիժը՝ որուն արժանի էինք։ Որովհետև ոչ ոք կրնայ տեսնել զԱստուած, նա բնակեցաւ մեր մէջ իբրև մարդ, որպէս զի անոր հոգին և վարքը տեսնելով յստակ գաղափար մը ունենայինք թէ ինչ է Աստուած։ Այսպէս ըսաւ. "Ան որ զիս տեսաւ՝ Հայրը տեսաւ։" Եւ եղաւ մարդ, որպէս զի կրելով մեր կրած նեղութիւնները՝ վստահութիւն զգանք թէ նա կրնայ կարեկից ըլլալ մեզի։ Այսպէս կը կարդանք. "Ինչ բանով որ ինքը չարչարուեցաւ փորձութիւն կրելով, կրնայ փորձանաւորներուն ալ օգնական ըլլալ." Նաև, "Զէ թէ ա-նանկ քահանայապետ մը ունինք՝ որ կարող չըլլայ մեր տկարութիւններուն կարեկից ըլլալու, հապա ինքը ամէն կերպով փորձը առած է մեզի նման։"

Վասն որոյ խորհէ Յիսուսի վրայ իբրև մարդոյ վրայ։ Ահա կը տեսնուի ՆՆՋԵՑԵԱԼԻ յուզարկաւորութիւն մը։ ՆՆՋԵՑԵԱԼն է որբևարիի

մը միամոլ որդին, և մայրը կ'երթայ դադա-
ղին եւեւէն՝ վշտացեալ սրտով։ Ո՞վ է այն որ
կը տեսնէ այդ որբևարին հեռուանց, կը գթայ
անոր վրայ, կ'երթայ մեռելին քով, կը յա-
ղուցանէ զնա, և որդին կը յանձնէ մօրը։ Այդ
սիրով լի բայց կարող մարդն է Յիսուս։ Ո՞վ
է այն որ կը կենայ մանր տղայոց բազմութեան
մէջ, և կ'առնու զանոնք քաղցրութեամբ իւր
բազկաց մէջ օրհնելու համար։ Յիսուս։ Ո՞վ
է այն որ կուլայ Ղազարոսի գերեզմանին քով։
Յիսուս։ Ո՞վ է այն, որուն եւեւէն կ'երթան բո-
լոր հիւանդները և աղքատները և վշտացեալ-
ները, և կը բժշկէ և կը մխիթարէ զանոնք բո-
լորը, ոչ զոք մերժելով։ Յիսուս։ Յիսուս տա-
կաւին նոյն է, սիրով լի, քաղցր, և կարեկից
հոգի մը։ Պէտք չէ որ վախնաս անկէ, նա է հոգի,
և քու եղբայրդ։ Նա է որ կ'ըսէ քեզ, «Եկուր
ինծի։» Մտիկ ըրէ անոր ձայնը, ով մեղաւոր։
Նա է հոգի Աստուածը, և կարող է փրկել զքեզ,
բայց է նաև «վշտաց տէր,» և լի կարեկցու-
թեամբ և սիրով։ Գիտէ քու բոլոր տկարութիւն-
ներդ և երկիւղներդ, կը զգայ զանոնք և կը գթայ
քու վրադ։ Կը հրամայէ քեզի որ չվախնաս։ Իբրև
մարդկային եղբայր մը կը կենայ անճառելի սի-
րոյ դէմքով և կ'ըսէ, «Եկուր ինծի, եկուր
ինծի։» Ոհ, անտարբեր մի ըլլար այսպիսի սի-
րելի բարեկամի մը։ Լսէ անոր։ Թող քու
սիրտդ շարժի անոր քաղցրութենէն։ Վստահէ

անոր խոստմանց։ Եկուր Յիսուսի խսկոյն։ Ա-
պաւինէ անոր իբրև քու փրկչիդ, և հնազանդ
եղիր անոր իբրև Թագաւորիդ, և նա պիտի
ըլլայ քեզի «եղբօրմէ աւելի հաստատ բարե-
կամ։»

Կարդա Ես. ԾԳ., Մատթ. ԻԶ., ԻԷ., Ղուկ.
Է. 11—15, Յովհ. Գ. 16, 17, ԺԴ. 9, Փի-
լիպ. Բ. 5—11, Եբր. Բ. 17, 18։

ՅԻՍՈՒՍ Է ՄԵՂԱՒՈՐԱՑ ՓՐԿԻՉԸ

«Այս խօսքը հաւատարիմ է՝ ու բոլորովին
ընդունելութեան արժանի. որ Քրիստոս Յի-
սուս աշխարհք եկաւ մեղաւորները փրկելու։»
«Անիկա Աստուած իր աջ ձեռքովը Առաջնորդ
ու Փրկիչ ըլլալու բարձրացուց։» Միայն այս
էր շարժառիթ անոր մեր չար աշխարհը գա-
լուն։ Եւ ի՞նչպէս կը փրկէ նա։ Կենալով մեր
տեղը և կրելով պատիժը որուն մենք էինք
արժանի։ Մենք կոտրած ենք օրէնքը, բայց
նա կատարեալապէս պահած է զայն. վասն զի
նա է «սուրբ, անմեղ, անարատ, մեղաւորնե-
րէն զատուած։» Մենք մահուան արժանի էինք
մեր մեղաց համար։ «Ան անձը որ մեղք կը
գործէ՝ անիկա պիտի մեռնի։» Բայց Յիսուս
մեռաւ մեր տեղը։ «Իր կեանքը շատերուն
համար փրկանք տուաւ։» Մենք անէծքի տակ
էինք։ «Անիծեա՛լ ըլլայ ամէն մարդ՝ որ
չկենար օրինաց գրքին բոլոր գրուածներուն

մէջ որ զանոնք կատարէ։" Բայց Յիսուս "մեղի համար անէծք եղաւ։" "Անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ, և մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ. և անոր վէրքերովը մենք բժշկուեցանք։" "Մեր մեղքերը իր մարմինովը խաչափայտին վրայ վերցուց։" Այս էր պատճառը թէ ինչու համար Յիսուս եղաւ մարդ, ինչու համար "մարդոցմէ անարգուեցաւ, ու երեսէ ձգուեցաւ. վշտաց տէր ու ցաւոց տեղեակ եղաւ," "մեր ցաւերը վերցուց։" Այս էր պատճառը թէ ինչու համար փորձութիւն կրեց, տաղնապեցաւ Գեթսեմանիի մէջ, իր տաղնապներուն մէջ իր քրտինքը արիւնի մեծ կաթիլներու պէս էր," ծեծուեցաւ, թքնուեցաւ, փուշերէ պսակ դրուեցաւ գլուխը, և դամուեցաւ խաչին վրայ։ "Իր անձը ամենուն տեղը փրկանք տրուաւ։" Մենք դերիներ էինք, և նա եկաւ որ ազատագրէ զմեզ։ Բայց դինը զոր վճարեց՝ էր բուն իսկ իր արիւնը։ "Փրկուեցաք Քրիստոսի պատուական արիւնովը։" Բանտարկեալ էինք և մահուան դատապարտուած, բայց նա թողուց իր Հօրը աթոռը և եկաւ կանգնեցաւ մեր քովը, և ըսաւ. "Ես պիտի մեռնիմ ասոնց տեղը որպէս զի անոնք թողութիւն ընդունին իրենց մեղաց և ապրին յաւիտեան։" Եւ հիմա որ դարձած է վերստին երկինքը իր փառաց, կ'ապրի զմեզ փրկելու համար։ Կը

հսկէ մեր վրայ, կը խօսի մեզի իր խօսքով և իր Հոգւով, կը լսէ մեր աղօթից, կը ջատագովէ զմեզ, կ'օգնէ մեզի մեր տկարութեանց մէջ, և "միշտ կենդանի է մեզի համար բարեխօս ըլլալու։" Յիսուս կը փրկէ զմեզ այսպէս իր թէ՛ մահուամբ և թէ՛ կեանքով։ Վճարած է մեր բոլոր պարտքերը, և պատրաստ է լեցունել մեր բոլոր կարօտութիւնները։ Մահուան խայթոցէն կ'ազատէ զանոնք որ կ'ապաւինին անոր, և դատապարտութենէ կը փրկէ դատաստանին օրը։ Մենք պարտիմք երևնալ Դատաւորին առջևը իբրև դատապարտելի մեղաւորներ. բայց եթէ կրնանք ըսել, "Ես կ'ապաւինիմ Յիսուսի որ մեռաւ ինծի համար," նա իսկոյն պիտի յայտարարէ թէ կատարելապէս ներուած են մեր մեղքերը և մենք փրկուած ենք։ Ընթերցող, Յիսուս կ'ըսէ քեզի. "Եղկելի՛ մեղաւոր, դուն դժոխք երթալու վտանգին մէջ ես, բայց ես ստացայ քեզի համար ձրի թողութիւն, զոր գնեցի իմ արեամբս։ Ես մեռայ քու տեղդ։ Կարող եմ փրկել զքեզ։ Եկուր ինծի։"

Տես Ես. ԾԳ., Գործ. Յ. 34—43, ԺԳ. 16—41, Հռովմ. Ե., Գաղ. Գ. 13, Ա. Տիմ. Ա. 15, Եբր. Թ. 11—28, Ա. Պետ. Ա. 18, 19, Բ. 24։

ՅԻՍՈՒՍ Է ՄԻ ՄԻԱՅՆ ՓՐԿԻՉ

Յիսուս ըսաւ, «Ես եմ ճամբան. մէկը Հօրը քով չգար, եթէ ոչ ԻՆԾՄՈՎ։» Մենք Աստուծմէ թողութիւն կրնանք ընդունել Յիսուսի՛ գալով միայն։ Աստուծոյ բոլոր ողորմութիւնն առ մեզ աւորս, դրուած է Քրիստոսի ձեռքը, և մէկը չկրնար ընդունել թողութիւն բայց եթէ անոր ձեռքէն։ Կան ոմանք որ զանց կ'ընեն գալ Յիսուսի և տակաւին կը յուսան Աստուծոյ ողորմութեանը։ Բայց եթէ անոնք կը մերժեն զՅիսուս, կը մերժեն ողորմութիւնը։ Աստուած անոնց պիտի ըլլայ բարկացող Դատաւոր մը միայն, «մաշող կրակ։» Բուն մեր բարի գործքերը չեն կրնար փրկել զմեզ։ Մեր լաւագոյն գործքերն անգամ են մեղանչական. և թէպէտ ըլլային կատարեալ, չէին կրնար քաւել անցեալ ժամանակին մէջ գործուած մեղքերը։ Սուրբն Պօղոս կ'ըսէ. «Օրէնքին գործքերէն մէկ մարմին մը պիտի չարդարանայ։» Եթէ կարող ըլլայինք երկինք մտնել բուն մեր արժանեօք, ինչո՞ւ համար ուրեմն մեռնէր Քրիստոս։ Այն ատեն մենք կրնայինք զմեզ փրկել։ Ո՜հ, մի վստահիր քու գործերուդ, քու բարի յատկութեանցդ, քու ուղղութեանդ և ողորմութեան գործերուդ, Բաց ի Յիսուսի արդարութենէն և մահէն ուրիշ և ոչ բան մը չկրնար փրկել զոք։ Ոմանք կը խորհին թէ ո-

րովհետև մկրտուած են և կը հաղորդուին, որովհետև կը կարդան Աստուածաշունչը, կը պահեն հանգստութեան օրը և եկեղեցի կ'երթան, պիտի փրկուին։ Հաղարաւորներ ըրած են այս բաները, բայց բնաւ եկած չըլլալով Յիսուսի, հիմա դժոխքն են։ Չկրնար փրկել զմարդ ոչ եկեղեցւոյ խորհուրդը, ոչ արարողութիւնը, ոչ հաւատոյ դաւանութիւնը, և ոչ եկեղեցին։ Ոչ բան մը բայց միայն Յիսուս կրնայ փրկել։ Կան ոմանք որ կ'ապաւինին իրենց քահանաներուն։ Ցաւալի՜ սխալ։ Եղկելի մարդը, քահանան, ինք իրեն համար կարօտ է Փրկչի մը։ Ինք չկրնար փրկել ի՛ւր հոգին, ո՜ւր կը մնայ քուկդ։ Ոչ ոք բայց միայն Յիսուս կրնայ տալ արձակում մեղաց։ Յիսուսի արի՛նը միայն կը սրբէ մեղքէն։ Կան ոմանք որ աղօթք կ'ընեն սուրբերուն, հրեշտակներուն, և Կոյս Մարիամին. բայց ո՞վ կրնայ ըսել թէ ասոնք կրնան լսել իրենց կանչողներուն, և եթէ կրնան լսել, կրնա՞ն փրկել հոգին։ Սուրբ Գիրք կ'ըսէ մեզ պարզ խօսքով. «Մէկ Աստուած մը կայ, ու մէկ միջնորդ մը Աստուծոյ ու մարդոյ մէջը՝ Քրիստոս Յիսուս մարդը։» «Եւ ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ. ինչու որ անկէ ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը մարդոյ մէջ տրուած, որ անով կարող ըլլանք փրկուելու։» Ուրեմն ուրիշ մէկու մը մի նայիր։ Միայն Յիսուսի ապաւինէ։

Նստած է նա ողորմութեան աթոռին վրայ, և կը հրաւիրէ բոլոր խեղճ մեղաւորները որ դան անմիջապէս իւր քով։ Միայն Յիսուս կրնայ տալ թողութիւն մեղաց։ Ընդէ՞ր ուրեմն կենաս, կանչես քեզ մեղսակից մարդոց, կամ մինչև անգամ հրեշտակաց, քանի որ բաց ի Յիսուսէ մէկ էակ մը չկրնար օգնել քեզի։ Պէտք չունիս մէկու մը որ քեզ անոր ներկայացունէ։ Մուրացիկը և իշխանը, սեամորթը և սպիտակամորթը, տգէտը և գիտունը, ցնցոտիներ հագնողը և մետաքս հագնողը հաւասարապէս կ'ընդունուին Յիսուսէ սիրով։ Ամենքն ալ հրաւիրուած են։ Կը մեղանչես եթէ օգնութեան համար կը նայիս որ և իցէ ուրիշ կողմ։ Վասն զի կ'ըսէ Նա, "Ո՛վ երկրիս բոլոր ծայրերը՝ ինծի նայեցէք, որ փրկուիք։" Մի նայիք մարդու, մի նայիք ձեր անձերուն, նայեցէք Յիսուսի՛ միայն, վասն զի Նա միայն կարող է փրկել։

Տես Գործ. Դ. 8—12, Հռովմ. Գ, 20—28, Գաղ. Բ. 16, Փիլիպ. Դ. 9, Ա. Տիմ. Բ. 5, 6։

ՅԻՍՈՒՍ Է ՍԻՐՈՂ ՓՐԿԻՉ

Թէ Յիսուս է սիրող Փրկիչ, ասոր չկրնար աւելի զօրաւոր ապացոյց ըլլալ քան զայս որ իջաւ երկինքէն չարչարուելու և մեռնելու համար։ Ահա բուն իսկ անոր խօսքերը. "Ասկէ աւելի մեծ սէր մէկը չկրնար ունենալ, որ մէկը իր

կեանքը բարեկամներուն համար դնէ։" Ինչո՞ւ համար թողուց Յիսուս սուրբ երկինքը և եկաւ այս մեղաւոր աշխարհը, հրեշտակաց երգերը՝ և եկաւ ենթակայ ըլլալ դիւաց փորձութիւններուն, փառաց աթոռը՝ և եկաւ չարչարուիլ խաչին վրայ։ Սէրը և միայն սէրը ընել տուաւ անոր այսպէս։ Սէր՝ ոչ առ բարեկամս, այլ առ թշնամիս։ "Երբ դեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզի համար մեռաւ։" Յուցուց իւր քաղցր սէրը հաղարաւոր կերպերով երբ էր աշխարհի մէջ, պատեցաւ բարիք ընելով, բժշկեց ամէն տեսակ հիւանդութիւնները, բնաւ երես չդարձունելով խղճալիներէն և վշտացեալներէն, միշտ "բարեկամ մեղաւորաց։" Ի՞նչպէս լացաւ Երուսաղեմի վրայ, մինչ կը մտածէր անոր մեղաց և մօտալուտ թշուառութեանց վրայով։ Մինչ կը գտնուէր մահուան տագնապներուն մէջ, ի՞նչպէս քաղցրութեամբ խօսեցաւ իւր հետ խաչուած ապաշխարող աւազակին հետ, և ի՞նչպէս երանդով աղօթեց ղինք ծաղրող սպանչաց համար, ըսելով, "Հայր, թողութիւն տուր ատոնց, ինչու որ չեն գիտեր ինչ կ'ընեն։" Դիւրաւ կրնար կանչել հրեշտակաց բանակ մը ազատելու ղինք. բայց եթէ մեռած չըլլար, մենք չէինք կրնար փրկուիլ, և վասն որոյ որովհետև սիրեց զմեզ, խմեց դառն բաժակը մինչև մըրուրը։ Եւ հիմա որ յարութիւն առած է, ա-

նոր սէրն առ մեղաւորս ճիշդ նոյնչափ մեծ է։ Սէրը կը ստիպէ զնա միջնորդել մեզի համար, գթալ մեր վրայ, ղրկել իւր Հոգին՝ օգնել մեզ, սպասել որ տայ մեզ իւր շնորհքը և փրկել զմեզ։ Կը սիրէ զքեզ, մեռաւ քեզի համար, գթով վար կը նայի քու վրադ, կը կոչէ զքեզ որ գաս իրեն։ Անոր սէրն է որ խնայեց քեզի մինչև այսօր՝ թէպէտ մերժեցիր զնա։ Անոր սէրն է որ կը համբերէ մեղացդ, և դարձեալ այս վայրկենին կ'աղաչէ քեզ որ ընդունիս քեզի համար իւր արեամբ գնած թողութիւնը մեղաց։ Եթէ բարեկամներդ մին տար իւր ստացուածքը քեզ բանտէ ազատելու համար, կը մոռնայի՞ր զնա։ Բայց Յիսուս քան զայս շատ մը աւելի բան ըրած է։ Մեռաւ փրկելու համար քեզ յաւիտենական թշուառութենէ, և ընելու համար յաւիտեան երջանիկ՝ երկինքին մէջ։ Կու գայ քեզի, և ցուցնելով իւր վերքերուն նշանները, կ'ըսէ, «Տես, մեղաւոր, թէ ո՛րչափ կը սիրեմ քեզ։ Տակաւին կը սիրեմ քեզ։ Եկուր ինծի, որ փրկեմ քեզ մեղքէն և դժոխքէն։» Ո՜հ, մի՛ մերժեր այսպիսի քաղցր Փրկիչ մը։ Մի կոխկրտեր ոտքիդ տակը այսպիսի զարմանալի սէր մը։ Բնաւ պիտի չպատահիս այսպիսի ուրիշ բարեկամի մը։ Վստահէ անոր։ Սիրէ զնա։ Միշտ պիտի գտնես զայն լեցուն գթութեամբ

և գորովով։ Պիտի մխիթարէ, առաջնորդէ, պաշտպանէ և փրկէ քեզ կենաց բոլոր վտանգներուն և վշտաց մէջ. պիտի ազատէ քեզ մահուան խայթոցէն, և յետոյ երջանիկ պիտի ընէ քեզ երկնից մէջ յաւիտեան։ Ո՜հ, եկուր այս սիրող փրկչին։

Տես Ղուկ. ԺԹ. 41—44, ԻԳ. 33—43, Յովհ. Ժ. 1—30, ԺԵ. 12—15, Հռովմ. Ե. 6—8, Եփես. Գ. 17—19։

ՅԻՍՈՒՍ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՄԵՐ ԴԱՏԱՒՈՐԸ

«Ամէնքս ալ Քրիստոսի ատեանին առջևը պիտի կայնինք։» Վշտաց տէրը պիտի դայ դարձեալ իբրև փառաց Աստուած, «և անոր առջևը պիտի ժողվուին բոլոր ազգերը։» «Ահա ամպերով կու գայ. ու ամէն աչք պիտի տեսնէ անիկա, և անոնք որ զանիկա խոցեցին։» Ի՞նչպէս խրախուսիչ է այս ի Քրիստոս հաւատացելոց։ Նա է ճիշդ այն անձը զոր պիտի ուզէին անոնք ընտրել իրենց համար. և երբ տեսնեն զնա աթոռին վրայ, պիտի ուրախանան, վասն զի անոնց լաւագոյն բարեկամը որ խոստացած է փրկել զանոնք, պիտի ըլլայ անոնց դատաւորը, և վասն որոյ ապահով պիտի զգան զիրենք։ Բայց ի՞նչպէս ահաւոր է անոնց համար որ մերժած են զնա։ Ի՞նչպէս սարսափելի է անոր յանդիմանական նայուածքը դէպ անոնք որ խոցեցին զնա իրենց մե-

ղանչական ղանցառութեամբ։ Ի՞նչպէս սոսկալի է լսել հիմա «Եկէք ինծի,» ըսող ձայնին անոնց «Մէկդի գացէք, անիծեալներ,» ըսելը։

Դիցուք թէ բանտարկեալ մը շուտով պիտի դատուի ոճրի մը համար, որուն պատճառաւ պիտի կորսնցունէ իւր կեանքը։ Դիցուք թէ անոր այցելութեան երթայ խոնարհ կերպարանքով բայց մեծ սէր ցուցնող մարդ մը, որուն սիրտը կը դալարի բանտարկելոյն վրայ ունեցած գթութենէն։ Շատ աշխատած է ոճրագործին ազատման համար այս դատաստանին մէջ։ Կը պատմէ բանտարկեալին թէ ինք ի՞նչ ըրած է անոր համար, և կը հաւաստէ թէ կրնայ վստահել իրեն և ապահով ըլլալ։ Կ'ապահովցունէ ղնա թէ ինք բոլորովին կարող է ազատ արձակել տալ ղնա և կամ թողութիւն ձեռք բերել անոր համար, միայն եթէ բանտարկեալը ուզէ որ նա ընէ այս բաները։ Կ'ըսէ բանտարկեալին. «Կ'աղաչեմ, թոյլտուր ինձ դալ դատարանը, և խօսել ի նպաստ քեզի։ Թոյլ տուր ինձ պաշտպանել քու դատդ։ Ազատեցի շատ բանտարկեալներ որոց վիճակը քու վիճակիդ պէս դէշ էր։ Ես կրնամ ազատել քեզ։ Զեմ պահանջեր քենէ վարձք մը։ Սէրն է միայն որ կը մղէ զիս ընել զայս։ Հաւանութիւնդ տուր որ օգնեմ քեզի։» Բայց բանտարկեալը, կը խօսի ասոր անոր հետ կամ կը քնանայ, և ականջ չկախեր անդամ այս իւր

բարեկամին։ Սա կու դայ կրկին և կրկին, և բանտարկեալը չսիրեր անոր դալը, և իւր ընթացքով կ'իմացունէ անոր որ չդայ ձանձրացունէ ղնա։ Կու դայ դատաստանին օրը, Բանտարկեալը կը բերուի դատարանը։ Կրնայի դատաւորին վրայ, անոր պաշտօնական հանդերձներուն վրայ, և կը տեսնէ որ այն է իւր անարգած բարեկամը որ իրեն քով կու գար բանտը։ Բայց հիմա անոր դէմքն է լուրջ և ձայնը՝ խիստ։ Այն որ մերժուած էր իբրև բարեկամ, հիմա կ'երևի իբրև դատաւոր միայն։ Մեղաւո՛ր, այն որ իբրև Դատաւոր պիտի նստի աթոռ վերջին օրը, հիմա կու դայ քեզի բանտին մէջ, և կ'առաջարկէ ըլլալ քու փրկիչդ։ Ցօժար է պաշտպանել դատդ, և կը խոստանայ քեզի ձրի և կատարեալ ազատութիւն դատաստանին օրը։ Մի մերժեր ղնա, վասն զի շուտով պիտի ներկայանաս անոր ատեանին առջևը։ Ապաւինէ անոր իբրև քու փաստաբանիդ, եթէ չես ուզեր դողալ անոր առջև իբրև քու Դատաւորիդ առջև։ Ընդունէ անոր հրաւէրը եթէ չես ուզեր լսել անոր քեզի դէմ դատապարտութեան վճիռ տալը։ Սիրով ընդունէ ղնա քու սրտիդ մէջ որպէս զի նա ընդունի զքեզ սիրով այն ատեն իւր թագաւորութեան մէջ։

Տես Մատթ. Իե. 31—46, Բ Կոր. Ե. 10, Ա Թես. Դ. 16—18, Հռովմ. Ա. 7։

Ո՞ՒՐ Է ՅԻՍՈՒՍ

«Երանի՜ թէ կարող ըլլայի դտնել զանիկա, մինչև անոր աթոռը կ'երթայի,» կ'ըսէր ցոր։ Դ՞ուն ալ այսպէս կ'ըսես, խե՛ղճ մեղաւոր։ կ'անձկա՞ս գիտնալ թէ ո՛ւր կրնաս դտնել զՅիսուս։ Ա.յլ ևս չէ նա երկրի վրայ մարդկային կերպարանքով, այլ վերստին դարձած է երկինք։ Հոն կրնաս դտնել զնա նստած ողորմութեան աթոռին վրայ, սպասելով տալ յաւիտենական կեանք ամէն անոնց որ կու դան անոր։ Թերևս կը խորհիս թէ հեռին երթալ պէտք է, բայց մեղաւորաց աղօթքները կը հասնին երկինք նոյն իսկ այն վայրկենին որ կ'ըսուին, և կը լսուին Յիսուսի միջոցաւ սիրալիր ուշադրութեամբ։ Բայց ասոր մէջ դըժուար կ'երևի հասկնալ, գիտնալ վստահաբար թէ Յիսուս ոչ միայն երկինքն է այլ նաև երկրիս վրայ։ Նա Աստուած է, վասն որոյ է ամէն տեղ։ Ըսաւ իւր աշակերտներուն. «Ամէն օր ձեզի հետ եմ։» Միշտ ներկայ է նա մեր մէջ։ Հիւանդին սենեկին մէջ կը դտնուի Յիսուս, պատրաստ՝ մխիթարել նեղեալ աշակերտը որ կը պառկի ցաւոց այն անկողնոյն վրայ։ Ծածուկ տեղը ուր մեղաւորն առանձնացած է խոստովանել իւր մեղքերը, հոն կը դտնուի Յիսուս ըսելու համար, «Քաջալերուէ, որդեակ, քու մեղքերդ քեզի ներուած են, դնա

խաղաղութեամբ։» Եկեղեցւոյ մէջ կամ այն սենեկին մէջ ուր շատեր կամ քիչեր ժողովուած են փառաբանութիւն և աղօթք մատուցանելու, հոն է Յիսուս որ կը սպասէ լեցուցանել անոնց կարօտութիւնները։ «Ուր որ երկու կամ երեք հոգի ժողվուած ըլլան իմ անունովս, հոն եմ ես անոնց մէջ։» Ընթերցող, Յիսուս մօտ է քեզի։ Հիմա որ քու աչքդ կը կարդայ այս երեսը, նա քովդ կեցած է։ Կը չշնչէ քու ականջիդ։ Կը հրաւիրէ քեզ որ փնտռես զնա։ Եթէ կը փափաքիս դտնել զնա, հարկ չէ որ երկար ճանապարհորդութիւն ընես, և ոչ երկար ժամանակ սպասես որպէս զի խնդրուածդ հասնի անոր ականջը։ Յիսուս աւելի մօտ է քեզի քան քու քովդ նստող բարեկամդ. վասն զի նա է քու սրտիդ դրանը քով, և կը զարնէ դուռը որ ներս մտնէ։ Ուր և երթաս՝ քու ետևէդ կու դայ ձեռուընները օրհնութեամբք լեցուն, զորս կը մատուցանէ քեզ ձրիապէս։ Կը քննէ քու չափդ և պառկիդ, բայց միշտ քեզի բարիք ընելու համար։ Ա.ռաւօտուն կը կենայ քու անկողնոյդ քով, առաջարկելով քեզ հագուեցուցանել զքեզ իւր արդարութեան սպիտակ պատմուճանով. և երբ կը նստիս սեղան, կ'ըսէ քեզ որ ուտես կենաց հացը որ պիտի փրկէ հոգիդ մահուանէ։ Ա.յնչափ մօտ է քեզի որ կը տեսնէ քու անոր դալու համար ըրած առաջին տկար ջան-

քը՝ , և կ'երկնցունէ իւր ձեռքը օգնել քեզի։ Այնչափ մօտ է քեզի որ կը տեսնէ զրկելման առաջին արտասուքդ , և կ'իմանայ թողութիւն գտնելու համար հանած առաջին հառաչանքդ։ Այնչափ մօտ է որ կը պատասխանէ քեզի տակաւին անոր չկանչած , և մինչ տակաւին կը խօսիս , կը լսէ։ Մեղաւո՛ր , ուր և ըլլաս , հոն է Յիսուս։ Այնպէս որ ամէն երկրի մէջ, ամէն պարագայից տակ , ցերեկ և գիշեր , տունը և դուրսը , կրնաս գալ Յիսուսի։

Տես Սաղմ. ՃԼԹ. , Եսայ. ԿԵ. 24 , Մատթ. ԺԸ. 20 , ԻԸ. 20 , Յովհ. ԺԴ. 18—23։

"Ի՞ՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ՅԻՍՈՒՍԻ ԳԱԼ"

"Շատ խօսուեցաւ Յիսուսի գալու վրայ , բայց ի՞նչպէս կրնամ գալ։ Յիսուս երկինքն է , ի՞նչպէս կրնամ երթալ հոն խօսել անոր հետ։ Ինծի ըսուած է թէ Յիսուս նաև ամէն տեղ է , բայց ես չեմ կրնար տեսնել զնա. ուրեմն ի՞նչպէս կրնամ երթալ անոր։ Եթէ երկրի վրայ ըլլար , ինչպէս էր երբեմն , ամէն նեղութիւն յանձն կ'առնուի անոր երթալու համար։ Կը ծախսէի բոլոր ստացուածքս ճամբորդութեան ծախքիս համար , կը ճամբորդէի հարիւրաւոր մղոն տեղ։ Դժուարութիւն մը չէր արգելեր զիս։ Իսկոյն ճամբայ կ'ելլէի։ Կ'երթայի անոր , յառաջ կ'երթայի բազմութիւնը մէկդի հրելով , ինչպէս հիւանդները սովոր

էին ընել, որպէս զի բժշկուէին։ Կ'իյնայի անոր առջև , կը բռնէի անոր պատմուճանէն կամ կը փարէի անոր ոտից , և կ'ըսէի , "Տէր Յիսուս , փրկէ զիս։ Ես չեմ գար քեզի բժշկուելու համար կուրութենէ , կամ կաղութենէ , կամ բորոտութենէ , այլ՝ մեղքէ։ Իմ սիրտս հիւանդ է անօրէնութեամբ։ Աստուծոյ բարկութեան և յաւիտենական դատապարտութեան վտանգին մէջ կը գտնուիմ։ Տէր , աղատէ զիս , ահա կը կորսուիմ։ Բայց , աւա՜ղ, Յիսուս այլ ևս մեր մէջ չէ , և ես չեմ կրնար հասկնալ թէ ինչ կը նշանակէ Յիսուսի գալ։" Սիրելի ընթերցող, բոլոր այս բաներն ըրէ սրտիդ մէջ, և այն ատեն Յիսուսի եկած ես։ Ի՞նչ կը կարծես թէ պիտի ըլլայ օգուտը անոր երթալուդ , և անոր առջև իյնալուդ , և բռնելուդ անոր հանդերձները և խօսելուդ անոր՝ ինչպէս սովոր էին հիւանդք և կոյրերը։ Ո՞չ ապաքէն այդպէս ընելով դիտցուցած կ'ըլլաս քու կարօտութիւններդ։ Նա արդէն գիտէ զանոնք։ Առանց այս բոլոր նեղութիւնները կրելու , կրնաս հասկցունել անոր թէ կ'ուզես որ աղատէ քեզ։ Խորհէ անոր վրայ , թող սիրտդ զգայ անոր պատուականութիւնը , և թող քու աղաղակդ վեր ելլէ անոր ճիշդ այնպէս՝ ինչպէս իբր թէ տեսնէիր զնա։ Այնպէս եռանդ ունեցիր որ իբր թէ բազմութիւն մը կայ անոր շուրջը զոր դուն կ'ուզես ճեղքել

անցնիլ Յիսուսի քով երթալու համար։ Կանչէ անոր, ինչպէս ըրաւ կոյրը թէպէտ չէր տեսներ զնա, աղաղակելով, «Յիսուս, որդի Դաւթի, ողորմէ ինծի։» Դուն աւելի բաղդաւոր ես քան զանոնք որ կ'ապրէին երբ Յիսուս կը գտնուէր երկրի վրայ։ Անոնք շատ անգամ հեռի տեղեր ճամբորդելու պէտք կ'ունենային։ Երբեմն չէին կրնար անոր քով երթալ ժողովրդեան բազմութեանն համար։ Բայց դուն կրնաս զնա իբրև քուկդ ընդունել իբր թէ չկայ ուրիշ մեղաւոր որ ունենայ կարօտութիւն անոր։ Յիսուս միշտ մօտ է, և թէպէտ դուն չես կրնար տեսնել զնա, ինք կը տեսնէ զքեզ, գիտէ բոլոր զգացումներդ, և կը լսէ բոլոր խօսածներդ։ Յիսուսի գալն է սրտին փափաքը դէպ ի նա։ Ի զգալ մեր մեղքերը և թշուառութիւնը, հաւատալ թէ կարող է նա և յօժար ներել մեզ, մխիթարել և փրկել զմեզ, խնդրել անկէ օգնել մեզ և վրստահել անոր իբրև մեր Բարեկամին։ Ունենալ ճիշդ նոյն զգացումները և փափաքները իբր թէ նա տեսանելի կերպով ներկայ է, և թէ եկած ենք աղաչել անոր օրհնել զմեզ, է գալ անոր, թէպէտ ոչ կը տեսնենք անոր երեսը և ոչ կը լսենք անոր ձայնը։ Ցիշէ, մեղաւոր, քու փափաքդ թողութիւն ընդունելու և քու աղօթքդ, «Յիսուս, աղատէ զիս,» է գալ անոր։

ԵԿՈՒՐ ԱՂՕԹՔՈՎ.

Թէպէտ չես կրնար տեսնել զՅիսուս, կրնաս խօսել անոր։ Կրնաս աղօթել։ Աստուած թոյլ տուած է և մինչև անգամ պատուիրած է այսպէս ընել։ Ի՜նչ մեծ արտօնութիւն՝ թոյլտուութիւն ընդունել խօսելու Աստուծոյ։ «Ներողութեան օրն ինծի կանչէ։» «Արթուն կեցէք և աղօթք ըրէք։» «Անդադար աղօթք ըրէք։» Աղօթքը չպահանջեր աղուոր և կարգաւորեալ խօսքեր։ Քու սրտիդ փափաքին ամենէն պարզ արտայայտութիւնը խօսքով՝ է աղօթք։ Նոյն իսկ փափաքները որ խօսքով չեն զրուցուած՝ աղօթք են։ Հարկ չէ որ սպասես մինչև որ մտնես եկեղեցի աղօթք ընելու համար. կրնաս աղօթք ընել ամէն տեղ։ Եւ Յիսուս միշտ կը սպասէ խեղճ մեղաւորաց աղօթքներուն, այնպէս որ ոչ ոք երբեք կը վրիպի անոր ուշադրութենէն։ Անոր ականջը միշտ բաց է։ Դժուար է խօսել թագաւորաց և իշխանաց. անոնք երբեմն միայն կը տեսնուին հասարակութեան, և այն ատեն իսկ միայն քիչ անձանց թոյլ կը տրուի մօտենալ անոնց։

Բայց ամէն մարդ կրնայ գալ Յիսուսի իրենց խնդրուածներով որչափ և խեղճ ըլլան անոնք և անարդեալ, և կրնան գալ ամէն ատեն։ Խնդրէ Աստուծմէ ինչ բարիք որ կ'ուզես քու հոգւոյդ համար։ Աղօթէ մեղացդ թողութեան,

հաւատոյ, սրբութեան և մխիթարութեան հա-
մար։ Անկարելի է որ աղօթես պարապ տեղը։
Կրնաս վստահ ըլլալ թէ այսպիսի աղօթքներ
պիտի ընդունին պատասխան։ Կան բաներ զորս
նոյն ինքն Աստուած չկրնար ընել։ Աստուած
չկրնար մեղանչել, և չկրնար մերժել պատաս-
խանել խեղճ մեղաւորի մը աղօթքին, վասն զի
խոստացած է։ «Խնդրեցէք, և պիտի տրուի
ձեզի,» ըսած է Յիսուս, և անոր խօսքը կը
յայտարարէ, «Իր անձը չկրնար ուրանալ։»
Ուրեմն քաջալերուէ աղօթել։ Թէպէտ դու
զքեզ նուաստ և անօգնական համարիս, ար-
գելուած չէ քեզ աղօթել։ Աղօթէ, թէպէտ
միայն կարող ըլլաս ըսել. «Տէր, ազատէ զիս,
եթէ ոչ կը կորսուիմ։» Աղօթելը ունակութիւն
ըրէ քեզի։ Գտիր տեղ մը ուր ըլլաս առան-
ձին։ «Երբ որ աղօթք կ'ընես, մտիր քու ներ-
քին սենեակդ ու դուռդ գոցէ։» Ելիր առօր-
եայ գործի սկսելու ատենէն առաջ որ ժա-
մանակ ունենաս աղօթելու։ Բայց սիրտդ Աս-
տուծոյ առջև։ Ըսէ անոր թէ ի՛նչպէս անարդ,
անօգնական և թշուառ ես դուն։ Խոստովանէ
մեղքերդ և աղաղակէ թողութիւն խնդրելով։
Կարդա Սուրբ Գիրքը, և խնդրէ այն սրբու-
թիւնը որ կը պատուիրուի հոն։ Ըսէ, «Տէր, ես
տգէտ եմ, սորվեցուր ինձ։ Սիրտս կարծր է,
կակուղցուր զայն։ Դարձուր զիս Սուրբ Հոգ-
ւովդ։ Օգնէ ինձ դալ առ Յիսուս, այսինքն

հաւատալ անոր, սիրել զնա և հնազանդել
անոր։ Փրկէ զիս մեղքէն, և յարմարցուր զիս
երկնից։ Եւ օրուան մէջ շատ անգամ թող
քու սիրտդ բարձրանայ դէպ ի Աստուած, մինչև
իսկ այն ատեն երբ զբաղած ես սովորական
աշխատութիւններովդ։ «Անդադար աղօթք ը-
րէք։» Եթէ աղօթքիդ պատասխանը չերևիր
թէ կը տրուի իսկոյն, շարունակէ աղօթելդ,
և անտարակոյս եղիր որ պիտի յաջողիս ընդ-
ունել պատասխանը։ Աղօթող հոգին բնաւ
չկրնար կորսուիլ։ Զես կրնար կորսուիլ քանի
որ անկեղծութեամբ կը կանչես Յիսուսի, ըսե-
լով, «Տէր, ողորմէ ինծի մեղաւորիս։»

Տես Սաղմ. ԾԵ. 17, ԿԶ. 2, ՃԲ. 17, Մատթ.
Զ. 5, 6, Ղուկ. ԺԸ. 1—14, Գործ. Ժ. 9, Փի-
լիպ. Դ. 6, Ա Թես. Ե. 17։

ԵԿՈՒՐ ԱՂՕԹԵԼՈՎ ՀԱՄԱՐՁԱԿ

Զարմանալի է որ մեզ նման մեղսալից ա-
րարածներու երբեք թոյլ տրուի աղօթել։ Երբ
խորհինք թէ ի՛նչ ենք մենք, և ի՛նչ է Աստ-
ուած, բնական է որ դողանք դալ անոր, և
ուստի կը վախնանք թէ գուցէ պիտի մերժէ
մեզ։ Բայց նա խրախոյս տուած է մեզ մօտե-
նալ մինչև անդամ «համարձակութիւնով շնոր-
հաց աթոռին առջևը։» Այս նշանակեր թէ
մենք դալու ենք առանց խորին մեծարանաց
և խոնարհութեան, բայց թէ մենք աղօթելու

ենք կատարեալ համոզմամբ՝ թէ Աստուած պի-
տի պատասխանէ մեզի։ Աղօթքի պատասխանի
շատ օրինակներ կան։ Եղեկիա թագաւոր ա-
ղօթեց և Սենեքերիմայ բանակը զարնուեցաւ։
Եղիա մարգարէ աղօթք ըրաւ, և կրակ իջաւ
երկինքէն՝ այրել ողջակէզը։ Առաքեալք ա-
ղօթք ըրին և Սուրբ Հոգին իջաւ անոնց վրայ
հրաշագործ շնորհքներով։ Եկեղեցին աղօթք
ըրաւ, և Պետրոս աղատուեցաւ բանտէն հրեշ-
տակի մը ձեռամբ։ Մենք չպարտիմք ակնկա-
լել թէ այս կենաց վերաբերեալ մեր բոլոր
խնդրուածները պիտի կատարուին, քանզի
շատ անգամ կը փափաքինք այնպիսի բաներու
որ մեզի վնասակար են։ Սակայն վստահ կրնանք
ըլլալ թէ Աստուած պիտի տայ մեզի ինչ որ
լաւագոյնն է։ Բայց երբ կը խնդրենք օրհնու-
թիւններ մեր հոգւոց համար, զորօրինակ, երբ
կը խնդրենք մեղաց թողութիւն, սրբութիւն և
փրկութիւն, բոլորովին կրնանք ըլլալ վստահ
թէ պիտի ընդունինք պատասխանը, վասն զի
ըսուած է մեզի թէ ինչ որ խնդրենք Աստու-
ծոյ կամացն համեմատ, կը լսէ մեզ Աստուած.
նաև ըսուած է թէ Աստուած «կ'ուզէ թէ բո-
լոր մարդիկ փրկուին։» Յիսուս ըսաւ, «խընդ-
րեցէք, և պիտի տրուի ձեզի,» և «իմ անու-
նովս ինչ որ խնդրէք, պիտի կատարեմ անի-
կա։» Նա կ'աղօթէ մեզի համար։ Մինչև ան-
գամ մեր ամենէն աղէկ աղօթքները երբէք

չեն արժանի դրաւել Աստուծոյ ուշադրութիւ-
նը։ Բայց մտիկ կ'ընէ անոնց վասն զի Քրիստոս
կը միջնորդէ։ Եթէ աղերսագիր մը գրես թա-
գաւորի մը, բայց պալատին մէջ գտնուողնե-
րէն և ոչ ոք կը ճանչնայ քեզ, և դուն ցնցո-
տիներ հագած ըլլաս, և բոլոր ջանքով աշ-
խատելէդ ետքը գրութիւնդ բիծերով ծած-
կուի, չե՞ս վախնար թէ բնաւ պիտի չընդուն-
ուիս, կամ թէպէտ ընդունուիս՝ քու աղեր-
սագիրդ պիտի չկարդացուի։ Բայց դիցուք թէ
թագաւորին որդին գար, և ըսէր, «Ես ինքնս
անձամբ քու աղերսագիրդ պիտի մատուցա-
նեմ, և պիտի խնդրեմ հօրմէս կատարել
խնդրուածդ։» Յիսուս այս բանը կ'ընէ։ Հօր
Աստուծոյ կը մատուցանէ մեր տկար աղօթք-
ները և կ'ըսէ, «Ի սէր իմ օրհնէ այս խեղճ
մեղաւորը, և կատարէ անոր խնդրուածը։»
Եւ ըսուած է մեզ թէ Հայրը կը լսէ անոր։
«Միշտ կենդանի է բարեխօս ըլլալու։» Ով
մեղաւոր, որ կը դողաս և կուլաս, ուրախ
եղիր։ Դուն բարեկամ մը ունիս արքունի պա-
լատին մէջ։ Թէպէտ անարժան են քու խընդ-
րուածներդ, Յիսուս կ'աղօթէ քեզի համար,
և անոր աղօթքները միշտ կ'ընդունուին։ Քան
զայս աւելի ի՞նչ կ'ուզես որ քաջալերէ քեզ։
Եկուր ուրեմն «համարձակութիւնով շնորհաց
աթոռին առջևը որ ողորմութիւն ընդունիս,
և շնորհք գտնես պէտք եղած ատենը քեզի
օգնելու։»

Տես Գ. Թագ. ԺԸ. 21—39, Դ. Թագ. ԺԹ., Մատթ. Է. 7—11, Յովհ. ԺԴ. 13, 14, ԺԷ., Գործ. Ա. 13, 14, Բ. 1—4, ԺԲ. 5—17, Եբր. Դ. 14—16, Է. 25, Ա. Յովհ. Ե. 14։

ԵԿՈՒՐ ՀԱՒԱՏՔՈՎ

Նոր Կտակարանին մէջ շատ տեղեր կը կարդանք հաւատքի վրայ։ Կը կարդանք թէ «հաւատքով կարդարանանք,» և «հաւատքով կը փրկուինք։» թէ «պարտիմք հաւատալ Տէր Յիսուս Քրիստոսի, որ փրկուինք։» Հաւատքն է վստահութիւն, ապաւինութիւն։ Եթէ անօթի ըլլամ, և մարդասէր բարեկամ մը տայ ինձ բան մը և ըսէ թէ հաց է այն, բայց մութ է և չեմ կրնար տեսնել, և սակայն եթէ սկսիմ իսկոյն ուտել զայն, ահա հաւատք է այս։ Ես կը վստահիմ անոր խօսքին։ Եթէ հիւանդ ըլլամ, և դեղ տրուի ինձ՝ ըսելով թէ օգուտ պիտի ընէ ինձ, և խմեմ զայն, ահա հաւատք է այս։ Ես այն դեղը խմելով կը ցուցնեմ թէ կը հաւատամ բժիշկին ճարտարութեանը կամ վստահութիւն ունիմ անոր վրայ։ Յիսուս եկաւ աշխարհ մեռնելմեղաւորաց համար։ Կ'ըսէ, «Հաւատա ինձ։ Ես գնեցի լիակատար թողութիւն քեզի համար և կրնաս ազատ արձակուիլ։ Ես իմ արիւնս թափեցի մեղացդ թողութեանն համար։ Բայց դուն ձրի պիտի ընդունիս զայն։ Եթէ հնազանդիս խօսքերուս,

և վստահիս իմ պաշտպանութեանս, յանձն կ'առնում փրկել քեզ մահէն և դժոխքէն։ Բոլորովին կարող եմ ընել զայս։ Հոս կայ հաց ուտելու համար, որ պիտի ապրեցունէ զքեզ եթէ ուտես. հոս կայ դեղ որ այնպէս պիտի բժշկէ քու հոգւոյդ հիւանդութիւնը որ բնաւ պիտի չմեռնիս։ Եկուր ինծի, հաւատա ինձ և պիտի փրկուիս։» Հաւատքն է վստահիլ ճիշդ այն բանին զոր կ'ըսէ Յիսուս։ Հաւատքն է պարզապէս դալ Յիսուսի։ Յիսուս մեռաւ քեզի համար։ Հաւատա անոր մեռնելուն, և ընդունէ անոր մահուան օրհնութիւնը։ Յիսուս բացած է բանտին դուռը քեզի համար։ Հաւատա այս ըրածին և փախիր բանտէն։ Յիսուս կ'ուզէ կրել քու բեռդ քու տեղդ։ Հաւատա և նետէ մեղքերդ անոր վրայ։ Վճարած է բոլոր պարտքդ։ Ուրախ եղիր։ Կը բերէ քեզի փրկութիւն, և կ'ըսէ, «Բուկդ պիտի ըլլայ այն, եթէ կ'ուզես ընդունել։» Երկնցուր ձեռքդ, և առ զայն երախտագէտ սրտով։ Նման անառակ որդւոյն շատ հեռացած ես տնէն, բայց Յիսուս արտօնութիւն առած է քեզի համար որ վերստին դառնաս տուն։ Հայրդ ի սէր Յիսուսի յօժար է սիրով ընդունել քեզ երբ կը դառնաս ետ։ Հաւատա անոր և ըսէ, «Ելեմ երթամ հօրս։» Կը փափաքիս որ քեզի վստահին քու ամուսինդ, կամ որդիքդ. և կը վշտանաս եթէ տարակուսին քու խօսքե-

ղուդ. այնպէս չէ՞։ Ըստ սմին օրինակի Յիսուս
ալ կ'ուզէ որ հաւատաս իրեն երբ կ'ըսէ,
«Խեղճ մեղաւոր, ես կարող եմ և կամեցող
փրկել զքեզ։ Եկուր ինծի։» Մի վշտացուներ
զնա չվստահելով անոր խօսքին։ Եթէ չես դար
անոր՝ խորհելով թէ շատ մեծ մեղաւոր ես,
ատով կ'ըսես թէ նա կարող չէ փրկել քեզ
թէպէտ կ'ըսէ մեղի. «Բոլորովին կարող ալ է
ապրեցուցանելու անոնք՝ որ իրմով Աստուծոյ կու
գան։» Դուն այսպէս սուտզրուց կ'ընես զնա։
Հաւատա թէ նա ստուգիւ պիտի կատարէ
ինչ որ կը խոստանայ։ Գնա անոր անմիջապէս։
Ըսէ անոր, «Կը հաւատամ, Տէր, օգնէ իմ
անհաւատութեանս։ Դուն կարող ես փրկել
ամենէն մեծ մեղաւորը. փրկէ զիս։»

Տես Յովհ. Գ. 14—18, Գործ. ԺԶ. 30, 31,
Հռովմ. Ե. 1, Եբր. ԺԱ.։

ԵԿՈՒՐ ԻԲՐԵՒ ՄԵՂԱՒՈՐ, ՃԻՇԴ ԻՆՉՊԷՍ ՈՐ ԵՍ

Թերևս կ'ըսես, «Ինծի պէս չար մեղաւոր մը
ի՞նչպէս կրնայ համարձակիլ դալ սուրբ Յի-
սուսի մօտ։ Յիսուս թող պիտի տա՞յ այսպիսի
թշուառականի մը որ մօտենայ իրեն։ Պէտք
չէ՞ որ սպասեմ մինչև ըլլամ աւելի յար-
մար։» Սիրելի մեղսակիցս, նոյն իսկ քու մե-
ղաւոր ըլլալդ զքեզ կ'ընէ յարմարագոյն Յի-
սուսի դալու։ Ինչ որ կը համարիս արգելք,
նոյնը ամենէն աւելի քաջալերիչ է. վասն զի

«Քրիստոս Յիսուս աշխարհք եկաւ մեղաւոր-
ները փրկելու,» և ուստի փրկել քեզ նման-
ները։ «Ես արդարները կանչելու չեկայ, հապա
մեղաւորները՝ ապաշխարութեան։» Ոչ թէ
կը գտնուի որ և իցէ մէկը որ է իրօք արդար,
այլ կան շատեր որ զիրենք կը կարծեն արդար,
և այսպիսի մարդիկ բնաւ պիտի չընդունուին
Քրիստոսէ։ Եթէ երբէք պիտի դանք անոր,
պէտք է որ դանք ճիշդ ինչպէս որ ենք։ Մենք
մեծ մեղաւորներ ենք։ Կոտրած ենք Աստուծոյ
օրէնքը։ Զար գործած ենք ինչպէս արտաքին
գործերով՝ նոյնպէս և մեր սիրտերուն մէջ.
մարած ենք Հոգին, և անարգած ենք Յիսուսի
սէրը։ Մեր մէն մի գործը լեցուն է թերու-
թիւններով։ Չենք կրնար սրբել մենք զմեզ։
Եւ եթէ դանք Յիսուսի՝ ցուցնելով թէ ար-
դարներ ենք, միայն կը ծաղրենք զնա։ Փո-
խանակ ըսելու թէ «հարուստ եմ ու մեծցայ,
և բանի մը կարօտ չեմ,» պարտիմք դալ իբրև
այնպիսիք որ են «խեղճ ու թշուառական և
աղքատ ու կոյր ու մերկ։» Այսպէս պարտիմք
դալ Յիսուսի և խոստովանիլ մեր անարժա-
նութիւնը։ Իւր առակներէն միոյն մէջ խօսե-
ցաւ Յիսուս ինքզինք արդար համարող մար-
դու մը վրայ որ շնորհակալ կ'ըլլար Աստուծմէ
թէ ուրիշ մարդիկներէն աւելի աղէկ էր, նաև
կոտրած սրտով ապաշխարող մարդու մը վրայ՝
որ չէր համարձակեր իւր աչուքներն երկինք

վերցունել, բայց կը ծեծէր իւր կուրծքն ըսե-
լով, «Աստուած, ողորմէ ինծի մեղաւորիս։»
Այս վերջինն էր որ իւր տունը դնաց մեղաց
թողութիւն ընդունած և փրկուած։ Եւ եթէ
մենք կ'ուզենք ընդունուիլ Յիսուսէ, պարտիմք
երթալ անոր նոյն ոգւով, ըսելով, «Աստուած,
ողորմէ ինծի մեղաւորիս։» Եւ մենք չպարտիմք
սպասել, խորհելով թէ երբեք աւելի արժա-
նաւոր պիտի ըլլանք։ Ոչ, մեր հոգիները կ'ա-
ռատաւորին մեղքով հեռացեալ, և բոլոր մեր
ուսումունք բնաւ պիտի չաղատեն զմեզ մէկ
սև բծէ մը անդամ։ Միայն Քրիստոսի արիւնը
կրնայ մաքրել զմեզ։ Մենք բնաւ չենք կրնար
զմեզ աւելի աղէկ ընել։ Պարտիմք Յիսուսի՛
գալ որ կարող է զմեզ աւելի աղէկ ընել։
Մինչև որ չգանք Յիսուսի, բան մը չըլլար։
Մեր առաջին պարտականութիւնն է գալ Յի-
սուսի։ Եկուր ուրեմն, խեղճ մեղաւոր։ Մի՛
սպասեր ուրիշ վայրկեանի մը, յիմարաբար
խորհելով թէ աւելի յարմար պիտի ըլլաս
հեռացեալ։ Դուն բնաւ պիտի չըլլաս աւելի
յարմար, և բնաւ աւելի սիրով ընդունելու-
թիւն պիտի չգտնես քան որչափ այս վայր-
կենին մէջ։ Յիսուս գիտէ շատ աւելի աղէկ
քան որչափ դուն գիտես թէ ի՛նչպէս մեղա-
ւոր և ապականեալ ես դուն, բայց չըսեր,
«Սպասէ,» այլ կ'ըսէ, «Եկուր։» Եկուր ու-
րեմն, քու բոլոր մեղքերովդ և տկարու-

թեամբդ, և սրտիդ կարծրութեամբը. եկո՛ւր
Յիսուսի։ Եկուր իբրև մեղաւոր և եկուր ճիշդ
ինչպէս որ ես։

Տես Սաղմ. ԾԱ., Մատթ. Թ. 10—13, Ղուկ.
ԺԸ. 9—14, Ա. Տիմ. Ա. 15, Յայտ. Գ. 17, 18։

«ԲԱՑՑ ԵՍ ԱՐԺԱՆԻ ՉԵՄ, ԵՒ ՉԵՄ ԿՐՆԱՐ ՈՒՂՂԱԿԻ ԳԱԼ»

Եթէ կ'երևակայես թէ որ և իցէ մեղաւոր
արժանի է փրկուելու, բոլորովին սխալ կ'առ-
նուս Աւետարանին բնութիւնը։ Փրկութիւնն
է ձրի պարգև և ոչ վարձատրութիւն։ Ոչ ոք
արժանի է։ Պողոս, Պետրոս, Յովհաննէս ար-
ժանի չէին։ Բայց Յիսուս այնչափ լեցուն է
սիրով՝ որ թէպէտ մենք ամէնքս ենք անար-
ժան, կը հրաւիրէ զմեզ գալ իրեն։ Եթէ Յի-
սուս մեր մեղքերն արգելք չհամարիր, ինչո՞ւ
մենք համարինք։ Յիսուս գիտէ թէ աղտեղի
ցնցոտիներ կը ծածկեն քեզ, թէ գարշելի
խատով մը բռնուած ես, բայց կ'ըսէ «Եկուր
ինծի։» Բուն իսկ այս բաներուն համար կ'ըսէ,
«Եկուր։» Ուրեմն ի՞նչ անպատշաճ է քեզի
մերժել ըսելով թէ անարժան ես։ Դուն կը-
նայիր ըսել նաև թէ հաց ուտելու չեմ քանզի
շատ անօթի եմ, կամ օգնութիւն ընդունելու
չեմ քանզի շատ աղքատ եմ, ճիշդ այն կեր-
պով որ կ'ըսես թէ թողութիւն ընդունելու
չեմ քանզի շատ անարժան եմ։ Բուն իսկ

այդ անարժանութեանդ համար սիրով կ'ընդունուիս Տէր Յիսուսէն։ Բայց կ'ըսես թերևս, թէ չեմ կրնար դալ անոր ինչպէս որ պէտք է։ Ուրեմն եկո՛ւր ինչպէս որ կրնաս։ Յիսուս չըսաւ, "Եկուր ինծի վաղելով կամ քալելով," այլ պարզապէս՝ "Եկուր։" Եկուր, և փոյթ չէ ինչ կերպով որ ըլլայ, և պիտի ընդունուիս։ Եկուր սողալով սողսկելով, որ և իցէ կերպով — միայն թէ եկուր։ Կ'ըսես թերևս, թէ բաւական չես ապաշխարած։ Բայց դու բնաւ պիտի չապաշխարես բաւական, վասն զի ապաշխարութիւնը՝ նման բոլոր ուրիշ շնորհաց՝ միշտ կ'աճի, և ոչ մէկուն ապաշխարութիւնը կրնայ հաւասարիլ իւր մեղաց։ Բայց մեր փրկուիլն անոր համար չէ որ բաւական կ'ապաշխարենք, այլ եթէ մենք երբեք ապաշխարենք, կը փրկուինք վասն զի Յիսուս մեռաւ։ Կ'ըսես թերևս, թէ չունիս բաւական սէր։ Բայց դուն բնաւ պիտի չունենաս բաւական սէր մինչև որ չերթաս երկինք։ Սակայն մենք կը փրկուինք՝ ոչ վասն զի կը սիրենք զԱստուած, այլ վասն զի Աստուած կը սիրէ զմեզ։ Կ'ըսես թերևս, թէ չունիս բաւական հաւատք։ Այդ ճշմարիտ է, և ամէն Քրիստոնեայ պարտի աղօթել, "Տէր, իմ հաւատքս աւելցուր։" Բայց եթէ դուն ստուգիւ կը նայիս Յիսուսի փրկուելու համար, այս նայելդ է հաւատք. և թէպէտ հաւատքն ըլլայ շատ տկար, սակայն զայն ունեցողը չկրնար կորսուիլ։ Բայց

կ'ըսես թերևս, թէ քու սիրտդ բոլորովին կարծրացած է, և վասն որոյ քու լոկ նեղութեան աղաղակներդ չեն աղօթք ղրես ընդունի Աստուած։ Քաջալերուէ միտք բերելով Սիմոն Մոգին դէպքը։ Անոր "սիրտը Աստուծոյ առջևը շիտակ չէր։" Նա էր "մաղձի դառնութեան մէջ և անիրաւութեան կապին մէջ։" Սակայն Պետրոս ըսաւ, "Աստուծոյ աղաչէ, գուցէ ներուի քեզի քու սրտիդ չար խորհուրդը։" Որ կը նշանակէ, "Եթէ դուն ստուգիւ աղօթես Աստուծոյ, քու մեղքերդ քեզի պիտի ներուին։" Քու վիճակդ քան անորն աւելի դէշ չկրնար ըլլալ. բայց անոր քաջալերութիւն տրուեցաւ դալ Յիսուսի։ Եկուր կոտրած սրտով որպէս զի նա բժշկէ զայն, կամ ինչպէս կ'ըսէ հեղինակը, "Եթէ դանես որ կոտրած չէ սիրտդ, տուր սակայն զայն անոր՝ փափաքելով որ ըլլայ կոտրած։" Թէպէտ անկարող ըլլաս դալ ուղղակի, ջանք ըրէ դալ. եկուր ինչպէս որ կու գաս, միայն թէ եկուր, և Յիսուս պիտի չմերժէ և չկրնար մերժել քեզ։

Տես Եսայ. Ա. 1—18, Գործ. Բ. 22, 23, 36—42, Գ. 13—19, 26, Ը. 18—23, Յայտ. ԻԲ. 17։

"ԲԱՅՑ ԿԸ ՎԱԽՆԱՄ ԹԷ ԵՍ ՁԵՄ ԸՆՏՐՈՒԱԾՆԵՐԷՆ"

Պատճառ չունիս այս երկիւղին. այդ երկիւղը բուն իսկ քու երևակայութենէդ է։

Աստուած , կամ հրեշտակ մը , և կամ Աստուածաշունչն ըսա՞ծ է քեզ այդպիսի բան մը։ Ընտրութիւնը , ինչ և նշանակէ , Աստուծոյ գործն է և ոչ քոյդ։ Մի չփոթիր անոր ծածուկ խորհուրդներուն միջամուխ ըլլալով, այլ նայէ բուն քու պարզ պարտականութեանդ։ «Ծածուկ բաները մեր Տէր Աստուծոյն կը վերաբերին , բայց յայտնուած բաները մեզի ու մեր որդւոյը տրուած են յաւիտեան , որ աս օրէնքիս ամէն խօսքերը կատարենք։» Մենք պարտիմք թողուլ ծածուկ բաները և միտ դնել յայտնուածներուն։ Մեր պարտքն է գործել Աստուծոյ օրէնքին համեմատ։ Եւ այս օրէնքն է յոյժ պարզ։ Երբէք տեղ մը չէ ըսուած թէ դուն չես ընտրուած , բայց ըսուած է քեզ թէ Յիսուս մեռաւ քեզի համար և դուն հրաւիրուած ես գալ անոր։ Ուրեմն այլ ևս մի նեղեր միտքդ այնպիսի դժուարին խնդիրներով ինչպէս է ընտրութեան խնդիրը , այլ իսկոյն հնազանդէ Աստուծոյ հրամայածին։ Աստուած կ'ըսէ , «Ձեր ըրած բոլոր յանցանքները ձեր վրայէն նետեցէք , և ձեզի նոր սիրտ ու նոր հոգի ստացէք։ Ձեր չար ճամբաներէն ետ դարձէք։ Ապաշխարեցէք ու Աւետարանին հաւատացէք։ Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսին , ու պիտի փրկուիս դուն։ Խնդրեցէք՝ և պիտի տրուի ձեզի . փնտռեցէք՝ և պիտի գտնէք . դուռը զարկէք՝ և պիտի բացուի ձեզի։ Աստուած մօտեցէք , ու անիկա ձեզի պիտի մօտենայ։ Ան որ ինծի կու գայ՝ բնաւ դուրս պիտի չհանեմ։» Ըրէ ինչ որ կ'ըսէ Աստուած և անշուշտ պիտի փրկուիս։ Դիցուք թէ շատ աղքատ ես , և հարուստ մարդ մը հրատարակէր թէ մէկ մէկ ոսկի պիտի տայ հարիւր մարդոց որոց անունները ոչ ոք գիտէ բայց միայն ինք , սակայն նոյն ժամանակը խոստանար թէ պիտի տայ զայն ամէն անոնց որ կը դիմեն անոր , պիտի ըսէիր , «Ես կը վախնամ թէ չեմ ընտրելոց թիւէն , վասն որոյ պիտի չխնդրեմ ըստակը։» Ոչ. դուն մանաւանդ պիտի ըսէիր , «Թէ՛ ըլլամ ընտրեալ հարիւրին մէջ թէ ոչ, որովհետև ամէն մարդ հրաւիրուած է , պիտի երթամ։» Նոյնն ըրէ նաև յաւիտենական կեանց համար։ Մի նստիր անգործ , նեղելով զքեզ անօգուտ հարցումներով թէ արդեօք քու անունդ գրուա՞ծ է Աստուծոյ գիրքին մէջ։ Դուն մեղաւո՞ր ես։ «Ոհ , այո՛։» Լաւ , ուրեմն հրաւիրուած ես , վասն զի « Քրիստոս եկաւ մեղաւորները փրկելու ,» և « անիկա քաւութիւն է բոլոր աշխարհի մեղքերուն։» Հրաւէրն է ընդհանուր . «Ան որ կ'ուզէ՝ թող կեանց ջուրը ձրի առնէ։» Յիսուս չըսաւ «Եկէք ինծի , դուք որոց անունները գրուած են կեանց գիրքին մէջ,» այլ ըսաւ , « Եկէք ինծի , բոլոր յոգնած ու բեռնաւորածներ։» Բեռնաւորա՞ծ ես մեղքով. ուրեմն եկո՛ւր Յիսուսի , և

այնուհետև կրնաս վստահ ըլլալ թէ քու անունդ պիտի գտնուի կենաց գիրքին մէջ։ Եկո՛ւր Յիսուսի, և պիտի ընդունուիս իբրև ընտրեալներէն մէկը, բայց եթէ հեռի կը կենաս Անկէ, կը կորսուիս։

Տես Բ Օր. Իթ. 29, Եղեկ. ԺԸ. 31, Յովել. Բ. 12, 13, Մարկ. Ա. 15, Ա. Յովհ. Բ. 2։

"ԲԱՅՑ ԵՍ ՉՈՒՆԻՄ ՀԱՒԱՏՔ"

«Զեմ զգար թէ ներուած են մեղքերս, և վստահ չեմ թէ փրկուած եմ։ Շատերը կ'ըսեն թէ գիտեն ե՛րբ դաան փրկութիւն, և թէ ունին ներքին վկայութիւն որ ամէն բան ապահով է իրենց համար։ Անոնք դաած են խաղաղութիւն, բայց ես դաած չեմ։ Լեցուն եմ տարակոյսներով և երկիւղներով, չունիմ հաւատք, վասն որոյ կը վախնամ թէ Յիսուս բընաւ չընդունի զիս։" Բա՛րեկամ, դուն կը շփոթես իրարու հետ երկու բաներ որ մեծապէս կը տարբերին իրարմէ. ասոնք են հաւատք և վստահութիւն։ Դուն կը խօսիս վստահութեան և ոչ հաւատոյ վրայ։ Շատ ուրախալի է վստահ ըլլալ ներում դտնելու և երկինք երթալու մասին, բայց կարելի է վստահութիւն չունենալ այդ մասին, և սակայն ունենալ հաւատք։ Հաւատքն է դալ Յիսուսի իբրև ողորմելի մեղաւոր, և միայն անոր վստահել փրկութեան համար։ Վստահութիւնն է տարակոյս չունե-

նալ թէ փրկուած ենք։ Հաւատք և վստահութիւն բոլորովին տարբեր են իրարմէ։ Հաւատքը անհրաժեշտ է փրկուելու համար, բայց ոչ վստահութիւնը։ Կան շատ մարդիկ որ ունին վստահութիւն, որ է սուտ և սնոտի բան, մինչ զուրկ են ի հաւատոյ, և կան շատեր ևս որ ունին ճշմարիտ հաւատք բայց չեն վայելեր վստահութեան հաճոյքը։ Դիցուք թէ նաւաբեկութեան հանդիպէիր, և փաթթուէիր նաւուն մէկ կտորին որոյ դէմ կոհակք կը բաղխին կատաղաբար։ Կենաց–նաւակ մը կու դայ քեզի։ Անպէս լաւ շինուած է այն որուն կարելի չէ ընկղմիլ։ Թիավարք այնպէս հանճարեղ են որ բնաւ չեն թերացած ապահով հասցուցեալ նաւակը նաւահանգիստ։ Անոնք կը հրաւիրեն քեզ նաւակը մտնել։ Գիտես որ այն նաւը որուն մէջ կը դտնուիս, շուտով պիտի խորտակի, կը հաւատաս նաև թէ կենաց–նաւակը քեզ ապահով պիտի տանի ծովեզրը։ Ուստի կը մտնես մէջը։ Բայց երբ ահագին կոհակները կը շարժեն զայն վեր և վար, և կը թուի թէ պիտի ընկղմեն զայն, կը վախնաս, և թերևս չաղատիս երկիւղէդ մինչև որ հասնիս ծովեզրը՝ ցամաք։ Նաւակը մտնելն էր հաւատք, երկնչելը մինչ կը դտնուէիր անոր մէջ՝ էր վստահութեան պակասութիւն։ Բայց թէպէտ վախցար, ահաբեկ եղար, սակայն այնպէս ապահով էիր ինչպէս թիավարք որ չունէին երկիւղ։ Քու

սարսափդ չվտանգեց ապահովութիւնդ , թէ-
պէտ աւրեց խաղաղութիւնդ։ Բալեկամ, մեք
ևս ենք փոթորկի մէջ։ Մեր մեղքերը յարու-
ցին Աստուծոյ արդարութեան փոթորիկը և
կոհակները։ Օրէնքը կ'որոտայ իւր անէծքները
մեզի դէմ։ Դժոխքը վարը իւր բերանը լայն
բացած է։ Յիսուս է նման կենաց–նաւակին։
Կու գայ մեզի , կը հրաւիրէ զմեզ թողուլ բո-
լոր մեր ապաստարանները որ այնպէս տկար և
խախուտ են ինչպէս խորտակող նաւ մը , և
ապաւինել անոր։ Հաւատք՝ է վստահել անոր
միայն , թէպէտ երբ կը խորհիս քու մեղացդ
և տկարութեանդ վրայ՝ թերևս լցուիս տա-
րակուսանօք և երկիւղներով և շատ անգամ
խորհիս թէ չես ապահով։ Քաջալերուէ ուրեմն,
ով դողդղացող հաւատացեալ։ Կը զգա՞ս թէ
կորսուած ես առանց Յիսուսի , և կ'աղօթե՞ս
եռանդեամբ , « Տէր , ազատէ զիս , եթէ ոչ
կը կորսուիմ։» Ուրեմն ինչ և ըլլան քու տխուր
տարակոյսներդ , ունի՛ս հաւատք , փրկարար
հաւատք , հաւատք՝ զորմէ խօսեցաւ Պօղոս երբ
ըսաւ , «Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսին , և
պիտի փրկուիս դուն։» Ոչ ոք , որ այսպէս կու
գայ Յիսուսի , կրնայ կորսուիլ։

ԵԿԷՔ , ՈՎ ԴՈՒՔ ՈՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԷՔ

Ծաղկահասակ ընթերցող , համոզուէ տալ քու
կանխագոյն տարիներդ Աստուծոյ։ Մանաւոր

խոստում կայ քեզի համար . « Զիս կանուխ
փնտռողները զիս կը գտնեն։» Թերևս կը խոր-
հիս . « Ես չպարտիմ բարեպաշտ ըլլալ վասն
զի դեռ փոքր եմ . քիչ մը վայելեմ աշխար-
հը , տակաւին շատ ժամանակ ունիմ ապրելու։»
Փո՞քր ես բարեպաշտ ըլլալու , կրօնքի ծառա-
յելու համար։ Բայց չե՞ս փոքր մեղանչելու
համար , և ոչ փոքր մեռնելու համար , և ոչ իսկ
փոքր դժոխք նետուելու համար։ Թերևս չապ-
րիս այնչափ երկար որ հասնիս չափահաս մարդ-
կութեան , թող թէ ծերութեան։ Քու հա-
սակդ եղող շատ պատանիներ կը մեռնին։ Երբ
մտնես դերեզմանատուն մը , կը տեսնես հոն
թէ գերեզմաններէն շատն են մանկանց և երի-
տասարդաց։ Մինչև անգամ հիմա կարելի է
որ մահը պատրաստուի յարձակիլ վրադ։ Ո՜հ ,
ուրեմն եկուր իսկոյն Յիսուսի։ Մեծապէս կը
սխալիս եթէ կարծես թէ կրօնքը տխուր կ'ընէ
քեզ։ Այն չտար քեզ ուրիշ բան , բայց միայն
ճշմարիտ երջանկութիւն։ Շատ երիտասարդք
փորձեցին զայն , և անոնք ամէնքը պիտի ը-
սեն քեզի թէ բարեպաշտութեան հաճու-
թիւնք և վայելք դերազանցապէս լաւագոյն
են քան բոլոր զուարճութիւնք մեղաց և ու-
նայնութեան։ Պիտի հասկնաս թէ ճշմարիտ է
այս եթէ դաս Յիսուսի։ Ի՞նչ . հաւանակա՞ն է
որ նա թողու իւր հաւատացեալները նուազ
երջանիկ ըլլալ քան որչափ կ'ըլլան ծառայք

աշխարհի։ Նաև ի՞նչպէս կը համարձակիս օր մի ևս ապրիլ քանի որ կը մերժես զնա։ Կը հրամայէ մեզ որ իսկոյն հաւատանք և հնազանդինք իրեն։ Ամէն օր որ կը մերժենք ապաշխարել՝ նոր ապստամբութեան դործ կ'ընենք և կը դանձենք բարկութիւն՝ բարկութեան օրուան համար։ Ի՞ըսես թերևս, թէ պիտի ապաշխարես երբ մեծնաս։ Բայց Աստուծոյ Հոգւոյն պէտք ունինք որ օգնէ մեզի ապաշխարել։ Եթէ կ'ըսես, «Քանի որ մանուկ եմ, պիտի ծառայեմ Սատանայի, և մինչև որ չմոտենամ մահուան՝ պիտի չդառնամ Աստուծոյ,» կը կարծես թէ Աստուած բնաւ պիտի տա՞յ քեզ իւր Սուրբ Հոգին։ Ո՞չ ապաքէն քու այս ըրածդ մարել է Հոգին։ Թերևս դուն բոլորովին իյնաս անհոգութեան մէջ և ըլլաս անյարմար ապաշխարելու։ Շատ քիչեր դարձի եկած են իրենց ծերութեան հասակին մէջ։ Եթէ փոքր հասակիդ մէջ չես դար Յիսուսի, հաւանական չէ որ դաս երբեք։ Ունակութիւնը զօրաւոր շղթայիւք պիտի կապէ կաշկանդէ զքեզ, և օր ըստ օրէ ևս առաւել պիտի դժուարանայ այն շղթայից խորտակման դործը։ Մինչ դու կը դանդաղիս, Սատանան կը դործէ։ Շատ ժրութեամբ կ'աշխատի կապ կապի վրայ աւելցունել վրադ։ Անոր դերին ես դուն, և նա կը ջանայ առաւել ևս ամուրցունել և պրկել շուանները որովք կապած է զքեզ։ Երբ

մեղք կը դործես, կապ մի ևս կ'աւելցունէ կապերուդ վրայ։ Իւրաքանչիւր տպաւորութիւն զոր կը ընդունիս, իւրաքանչիւր ժամ յորմանհոդ կ'ըլլաս, կ'աւելցունէ նոր կապ մը կապերուդ վրայ։ Եթէ չես փախչիր հիմա, ի՞նչպէս կրնաս յուսալ թէ կարող պիտի ըլլաս արձակուիլ այնպիսի ժամանակ մը երբ դուն աւելի տկար և կապանքդ աւելի զօրաւոր պիտի ըլլան։ Ո՜հ, ուրեմն հիմա «Քու Ստեղծիչդ երիտասարդութեանդ օրերուն մէջ յիշէ։» Եկուր իսկոյն Յիսուսի, եթէ երբեք կ'ուզես դալ։ Նա պիտի ըլլայ քեզի առաջնորդ որոգայթից մէջ, միխիթարութիւն՝ վշտաց մէջ, պահապան՝ կենաց վտանդներուն մէջ։ Օր մը անդամ մի՛ կորսնցուներ այսպիսի բարեկամ մը ստանալու արտօնութիւնը։ Ըսէ այս վայրկեանէս սկսեալ. «Ով Հայր իմ, դուն ես իմ մանկութեանս առաջնորդը։»

Առակ. Գ. 1—24, Դ., Ը. 17, Յոհ. ԺԲ. 1։

ԵԿԷՔ, ՈՎ, ԴՈՒՔ ՈՐ ԾԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՍԱԿԻՆ ԿԸ ՄՕՏԵՆԱՔ, ԵՒ ԴՈՒՔ ՈՐ ԱՐԴԷՆ ԾԵՐԱՑԱԾ ԷՔ

Զեզի համար կենաց առաւօտն անցած է։ Հասած էք լերան դագաթը, կամ կ'ելլնէք ձորը անոր միւս կողմէն։ Դուք արագ կը մօտենաք դերեզմանին։ Թերևս տակաւին ոգւով և ջանիւ զբաղեալ ես կենաց հարկաւոր աշխատութիւններով, կամ թերևս շահու հակա-

միութիւնը և սէրը ընկղմած է քեզ բաղում ընկճող հոգերու մէջ։ Բայց մի մոռնար որ «մէկ բան մը պէտք է։» Մենք կրնանք ըլլալ առանց որ և իցէ ուրիշ բանի մինչև անգամ առանց նոյն իսկ կեանքի, բայց բնա՛ւ՝ առանց Յիսուսի։ Հոգւոյն փրկութիւնն է այն միակ բանը որ պէտք է։ Շատ տարիներէ հետէ զբաղեալ ես այս կենաց գործառնութիւններով, բայց տակաւին չես գտած ժամանակ կրօնքի ծառայելու։ Քու գլխաւոր գործդ սկսուած անգամ չէ։ Բայց բոլոր ուրիշ բաներն ի՛նչ ընչին իրեր են բաղդատելով կրօնքին հետ։ Քանի մը տարիէն ետքը կարևորութիւն մը պիտի չունենայ մեր հարուստ կամ աղքատ ըլլալը, բայց անհուն հետևանք պիտի ունենայ մեր առ Յիսուս եկած ըլլալը կամ չըլլալը։ Հազարաւոր մարդիկ մեռած են շուրջդ։ Դրացիք և բարեկամք, և շատեր որոց հետ դպրոց կ'երթայիր կամ գործի սկսար, իրենց գերեզմաններուն մէջ են հիմա։ Աստուած խնայած է քեզ։ Բայց դու ևս կրնայիր կտրուած ըլլալ անպտուղ ծառի մը նման, անպատրաստ։ Թերևս Աստուծոյ երկայնմտութիւնը հատած է։ Թերևս շուտով պիտի տրուի «Ատիկա կտրէ, ինչո՞ւ համար գետինը խափանէ» վճիռը։ Թերևս ծերացած ես։ Իմ ծերունի բարեկամս, ո՞րչափ լուրջ աղդարարութիւնք կը ստիպեն զքեզ պատրաստուելու։ Քու խոր-

շոմեալ դէմքդ, ճերմկած մազերդ, նուաղած ոյժդ, բարձրաձայն կ'ըսեն քեզի թէ մօտ է վախճանդ։ Դու կը դողդոջես գերեզմանին եզրը։ Թերևս երիտասարդ մը ապրի շատ տարիներ, սակայն դուն չես կրնար այլ ևս երկար ապրել։ Շուտով, շատ շուտով պիտի մեռնիս։ Ո՛հ, ի՛նչպէս սոսկալի է կանգնել Քրիստոսի դատաստանին աթոռին առջև, և տալ հաշիւ երկար կեանքի մը համար զոր անցուցած ես մերժելով զնա, հաղարաւոր այն կիրակիներուն համար, նաև քարոզներուն և արտօնութեանց համար, որոց անհոդ դանուեցար։ Ո՛հ, ուրեմն Յիսուսի եկուր հիմա։ Մի կորսընցուներ վայրկեան մը իսկ։ Մէկ վայրկեան մը անգամ չպարտիս վատնել յումպէտս։ Ա՛ր-դարև կարծրացուցած ես սիրտդ, և ապաշխարութիւնն աւելի դժուարացուցած ես, այսչափ երկար ժամանակէ հետէ զանց ընելով կրօնքի ծառայելը։ Բայց եթէ անկեղծ եռանդով խնդրես Աստուծոյ Սուրբ Հոգւոյն օգնութիւնը, պիտի չնորհէ խնդրուածդ մինչև անգամ հիմա։ Ցակաւին չէ շատ ուշ։ Թէպէտ այսչափ ժամանակէ հետէ մերժած ես լսել անոր, Յիսուս չէ դադրած քեզի խօսելէ։ Ցակաւին կ'ըսէ, «Եկուր ինծի։» Ցակաւին կը սիրէ քեզ։ Ցակաւին կը սպասէ փրկել քեզ։ Ո՛հ, այլ ևս մի անարգանօք վարուիր անոր հետ։ Ետևդ նայէ։ Մահը կու գայ ետևէդ մեծ քայ-

լերով, շատ մօտեցած է քեզի։ Դատաստանը շատ մօտիկ է և դժոխքը անմիջապէս կու գայ անոր ետևէն։ Գրեթէ պիտի բռնեն քեզ։ Փախիր Քրիստոսի այս վայրկենին։ Եկուր Յիսուսի։ Միայն նա կարող է փրկել։

Տես Մատթ. Զ. 19—24, Ղուկ. Ժ. 40—42, ԺԳ. 6—9։

ԵԿՈՒՐ, ՈՎ ՈՒԽՏԱԴՐՈՒԺ

Քուկդ մանաւոր վիճակ մի է, վասն զի դուն արդէն եկած ես Յիսուսի, բայց մոլորած ես անկէ։ Դուն ժամանակաւ մօտ էիր ա-նոր բայց այժմ հեռացած ես անկէ։ Քու մեղքդ շատ մեծ է։ Դուն քիչ մը առած ես փորձը Քրիստոսի սիրոյն, բայց այժմ թողած ես զնա։ Դուն վայելած ես աւելի պայծառ լոյս և աւելի մեծ օգուտ քան զայնպիսիս որ բնաւ չեն գիտցած թէ կրօնքն ինչ է։ Ընդունուած ես փարախին մէջ, և առած ես հա-մը քաղցր արօտին ուր բարի Հովիւը կ'արածէ իւր հօտը, բայց դուն այսու ամենայնիւ մոլորած ես սուրբ փարախէն։ Գուցէ քու այս վիճակդ սկսաւ նախ ծածուկ կերպով մը, ա-ղօթք չընելով և անհոգ ըլլալով Աստուծոյ խօսքին։ Կամ տեղի տուիր փորձութեան մը, բայց չդացիր Քրիստոսի՝ թողութեան համար, և այսպէս տակաւ եղար անհոգ։ Դուն տակաւին կրնաս դրսուանց զքեզ ձեւացունել բա-

ռեպաշտ, բայց քու սիրտդ չիտակ չէ Աստուծոյ առջևը։ Թերևս ընկղմած ես աշխարհային զբօսանաց մէջ, և օրինակ ես ցովհաննէս ա-ռաքելոյն խօսքին. "Թէ որ մէկը աշխարհը կը սիրէ, անոր ներսի դին Հօրը սէրը չկայ։" Գուցէ աւելի դէշ վիճակի մէջ կը գտնուիս, ինկած ըլլալով յայտնի մեղաց մէջ, և բերած ըլլալով ամենուն առջև նախատինք Քրիստոնեայ անուան վրայ։ Կորսնցուցած ես բարիք ընելու բոլոր այն պատեհութիւնները որ եթէ չըլլայիր ուխտադրուժ, պիտի ընէիր։ Այսպէս կողոպտած ես զԱստուած։ Վհատեցուցած ես ուրիշներ ալ քու ցրտութեամբդ և անհաստատութեամբդ, և այսպէս արգելք եղած ես շատերու որք կը հարցնէին, "Ինծի ի՞նչ պէտք է ընել որ փրկուիմ։" Փոխանակ օրհնութիւն ըլլալու այլոց՝ եղած ես անէծք։ Եւ որ աւելին է, վշտացուցած ես Սուրբ Հոգին, կրկին խաչը հանած ես Աստուծոյ Որդին և խայտառակած ես զնա։ Բայց Յիսուս, բարի Հովիւը, որոյ փարախը թողուցիր, կ'ուզէ ետ բերել քեզ։ Կը փնտռէ մոլորեալ ոչխարը։ Կ'ըսէ, "Ով Իսրայէլ, քու Տէր Աստուծոյդ դարձիր։ Անոր ըսէք, Այմէն անօրէնութիւնը վերցուր, և մեզ բարութեամբ ընդունէ։ Անոնց ապըստամբութիւնը պիտի բժշկեմ, զանոնք ձրիապէս պիտի սիրեմ, քանզի իմ բարկութիւնս անոնցմէ դարձաւ։ Դարձէք, ով ապստամբ

որդիք , և ես պիտի բժշկեմ ձեր ապստամ-
բութիւնը ,քանզի ես ողորմած եմ։ Միայն թէ
,քու անօրէնութիւնդ ճանչցիր որ ,քու Տէր Ա-
ստուծմէդ ապստամբեցար։ Դարձէք , ով ա-
պըստամբ որդիք ,” կ'ըսէ Տէրը։

Խորհէ այս ,քաղցր խօսքերուն վրայ։ Լաւ
մտածէ անառակ որդւոյն առակին վրայ։ Քան
զայն ի՞նչ աւելի քաջալերութեան պէտք ու-
նիս։ Թէպէտ մոլորելով հեռացար Յիսուսէ ,
կրնաս նորէն դալ անոր։ Նա այնպէս յօժար
է ընդունել ,քեզ ինչպէս առաջ։ Ուրեմն կանդ
առ դէպ ի ետ երթալու ընթացքիդ մէջ։ Տէ-
րոջը դարձիր , վասն զի ինչո՞ւ համար մեռնիս։

Տես Սաղմ. ՃԺԹ. 176 , Երեմ. Գ. 12—14 ,
22 , Ովս. ԺԴ. 1 , 4 , Ղուկ. ԺԵ.։

ԵԿՈՒՐ , ՈՎ ՅՈՒՍԱՀԱՏԵԱԼ ՄԵՂԱՒՈՐ

Թերևս կ'ըսես, “Ստուծոյ ողորմութիւնն ու-
րիշներուն համար է և ոչ ինծի համար։ Ես
շատ մեղաւոր եմ։ Ես չարաչար գործածեցի
մեծագոյն արտօնութիւնները , և ի դերև հա-
նեցի հզօրագոյն համոզումները։ Կռուեցայ Ա-
ստուծոյ դէմ, և այնպիսի ոճիրներ գործեցի
որ կը սոսկամ խորհել անոնց վրայ։ Անհնար
է ինձ դանել թողութիւն։” Լսէ , ով մեղա-
ւոր , Ստուած կ'ըսէ , “ Թէ որ ձեր մեղքերը
կրկնակի կարմիրի պէս են՝ ձիւնի պէս պիտի
ճերմկնան։” “Ես կենդանի եմ,” կ'ըսէ Տէր Ե-

հովան , “որ ամբարշտին մեռնիլը չեմ ուզեր ,
հապա որ ամբարիշտը իր ճամբէն դառնայ ու
ապրի , դարձէք՝ դարձէք ձեր չար ճամբանե-
րէն , վասն զի ինչո՞ւ մեռնիք։” Լսէ , ով մե-
ղաւոր , “Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն
մեղքէ կը սրբէ։” Ամէն մեղքէ , ուրեմն նաև
,քու մեղքերէդ։ Լսէ՛. “ Բոլորովին կարող ալ
է ապրեցուցնելու անոնք՝ որ իրմով Աստուծոյ
կու գան։” Եւ ուրեմն նաև ,քեզ։ Լսէ . “Քրիս-
տոս Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները
փրկելու որոնց գլուխը ես եմ։” Կը փրկէ մե-
ղաւորաց գլխաւորը , և ուրեմն կրնայ փրկել
,քեզ ալ։ Դաւիթ որ գործած էր սպանութիւն ,
Պետրոս , որ ուրացած էր զնա , աւազակը խա-
չին վրայ , և հաղարաւորք որ աղաղակեցին
“Խաչը հանէ ատիկա ,” Պօղոս՝ հալածիչը , ա-
սոնք ամէնքը փրկուեցան։ Եւ այն որ փրկեց
զանոնք , կարող է փրկել նաև ,քեզ։ Կը վախ-
նա՞ս թէ գործած ես աններելի մեղք։ Նոյն
իսկ ,քու այդ անձկութիւնդ է աներկևան ա-
պացոյց թէ չես գործած աններելի մեղք։ Ինչ
որ է աններելի կոչուած մեղքը , ստոյգ է թէ
զայն գործող որ և իցէ մէկը բնաւ պիտի չա-
պաշխարէր ճշմարիտ զղջմամբ անոր վրայ։
Վասն զի Աստուածաշունչը կ'ըսէ ամէն տեղ,
թէ ամէն ով որ կ'ապաշխարէ , ներում պիտի
դանէ , թէ ամէն ով որ ողորմութիւն կը փընտ-
ռէ , պիտի դանէ։ Եւ Յիսուս կ'ըսէ , “Ան որ

ինծի կու գայ՝ բնաւ դուրս պիտի չհանեմ,” այսինքն որ և իցէ բան պատճառ պիտի չըլլայ զնա դուրս հանելու։ Այնպէս որ կրնանք բոլորովին ըլլալ անտարակոյս թէ ապաշխարող մեղաւոր մը որ կու գայ առ Յիսուս մեղաց թողութեան համար, գործած չէ աններելի մեղք։ Աստուած հաւատարիմ է իւր խոստման և երդման, և առատապէս կը ներէ ամէն մեղաւորի որ կու գայ Յիսուսի՝ փրկուելու համար։

Բայց պիտի ըսես Թերևս, “Ես կորսուած մեղաւոր մըն եմ։” Անգամ մը սեղանոյ վրայ կը գտնուէր հռչակաւոր Մր. Հուիթֆիլտի եղբայրներէն մին Լէյտի Հընթինկդընի հետ որ ջանաց խրախուսել նորա յուսահատեալ հոգին խօսելով Քրիստոսի անհուն ողորմութեան վրայ։ “Տիկին,” ըսաւ, Մր. Հուիթֆիլտ, “Ճշմարիտ է թէ ես պարզ կը տեսնեմ զայդ, բայց ինծի համար չկայ ողորմութիւն, ես բոլորովին կորսուած թշուառական մըն եմ։” “Ես ուրախ եմ, ուրախ՝ բոլոր սրտովս որ կը լսեմ թէ դու կորսուած մեղաւոր մըն ես,” պատասխանեց միւսը։ “Ինչո՞ւ համար, Տիկին, ուրա՞խ ես որ ես եմ կորսուած մարդ մը։” “Այո, Մր. Հուիթֆիլտ, ստուգիւ ուրախ եմ, վասն զի Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ կորսուածը փրկելու։” Այդ խօսքը խրախոյս տուաւ անոր հոգւոյն։ Հաւատաց Յիսուսի, և շուտ ետքը մեռաւ խաղաղ մահուամբ։ Ով

մեղաւոր, ուրախ եղիր, Յիսուս եկաւ փրկել կորսուածը, փրկել զքեզ։

Տես Ես. Ա. 18, Եղեկ. ԺԸ. 30—32, Լդ. 11, Ղուկ. ԺԹ. 10, Յովհ. Զ. 37, Ա Տիմ. Ա. 15, Եբր. Է. 25, Ա. Յովհ. Ա. 7։

ԵԿՈՒՐ, ՈՎ ԱՆՀՈԳ ՄԵՂԱՒՈՐ

Ի՜նչ ահաւոր վիճակ, երբ Աստուծոյ դէմ ապստամբ մը որ արագ արագ մահուան կը դիմէ, և դատապարտուած է դժոխքի, դեռ կը գտնուի անհոգ։ Ընթերցո՛ղ, դուն ալ այնպիսիներէ՞ն ես որք այնչափ շատ զբաղեալ են այս աշխարհիս չնչին բաներով որ ուշադրութիւն չեն տար հանդերձեալ ստոյգ և յաւիտենական բաներուն։ Լսէ Յիսուսի սա աղդու հարցման։ Մտածէ անոր վրայ։ “Ի՞նչ օգուտ է մարդուն՝ որ բոլոր աշխարհը վաստակի, և իր անձը կորսընցընէ։” Դիցուք թէ տեսնէիր ամբոխ մը որ կը քալեն մարդագետնի մը վրայէն որոյ ծայրը կայ սոսկալի զառ ի վայր մը։ Անոնք յառաջ կ՚երթան զուարթ և ուրախ, ծաղիկներ փրցունելով, մինչև որ կը հասնին անոր ծայրը և մի առ մի կ՚ինկնան գահաւանդէն վար և կտոր կտոր կը ջախջախին։ Պիտի չաղաղակէի՞ր անոնց, “Կեցէք, կեցէք, եթէ կը յարդէք ձեր կեանքը, ե՛տ դարձէք։” Դուն յառաջ կը վազես աւելի սոսկալի վախճանի մը։ Քու առջևդ բացուած է կրակի լիճը,

և տակաւին կ'երթա՞ս յառաջ։ Յիսուս կ'աղաղակէ. «Դարձէք, դարձէք, ինչո՞ւ համար մեռնիք։» Բայց դուն չես տեսներ վըտանգը։ Երջանիկ կը զգաս դու զքեզ, և կը յուսաս թէ ամէն բան ըստ կարգին պիտի ըլլայ քեզի համար այսուհետև։ Բնաւ տեսած չե՞ս թէ հոսանքն ի՞նչպէս հարթ է և հանդարտ ճիշդ կարկաջասահանքէն վար գահավիժելէն առաջ։ Այսպէս է քու այժմու խաղաղութիւնդ. շուտով պիտի խանգարի ահաւոր կերպով անվախճան թշուառութեան մէջ գահավիժելով։ Կան շատ թոյներ որ հաճելի համ ունին, և կը հրապուրեն զանոնք որ կ'առնուն, և անուշ անուշ կ'իյնան թմրած, բայց այն թմրութենէն բնաւ չեն արթննար։ Դուն կը խմես Սատանային մահացու բաժակը։ Ինչ որ կը կարծես հաճոյական ըմպելի, է մահաբեր թոյն, և քու անհոգութիւնդ կրօնքի վրայ՝ նշան է թէ ի՞նչպէս ահաւոր կերպով կ'աղդէ այն քու հոգւոյդ վրայ։ Զգուշացիր, գուցէ արթննաս դժոխքին բոցերուն մէջ։ Մինչ տակաւին չէ ուշ, սթափէ այս թմրութեան վիճակէդ։ Ցունդ կրակ առած է, անոր տանիքը շուտով պիտի փլչի և իր ներքև ջախջախէ զքեզ։ Բայց դուն կը նստիս հանդարտ, կը խաղաս չնչին բաներու հետ և անփոյթ ես ամէն աղդարարութեանց դէմ։ Շատեր կ'աղաղակեն, «Կրա՛կ կայ, կրա՛կ կայ, փախիր և ա-

զատէ կեանքդ։» Բայց դուն ուշադրութիւն չես ըներ այս աղաղակներուն։ Յիսուս կը ներկայացունէ զինք ապաստանարան քեզի, բայց ի զուր։ Դուն տակաւին չես նայիր, տակաւին վտանգի մէջ ես։ Վտանգի մէջ կ'առնուս քու իւրաքանչիւր շունչդ։ Վտանգն է քու ճանապարհի ընկերդ, և վտանգը կը սաւառնի տանդ վրայ։ Վտանգը կը շրջապատէ քեզ ցերեկուան զբաղմանց մէջ, և վտանգը կը նայի քեզի վարագոյրներուդ միջոցներէն գիշերուան լռութեան մէջ։ Թերևս յաջող գործ ունիս, սիրելի ես, կը շողոքորթեն զքեզ և կ'ապրիս անհոգ, անխորհուրդ, բայց գիտցած ըլլաս որ վտանգի մէջ ես։ Թերևս ընկղմած ես գործիդ վերաբերեալ խորհուրդներու մէջ, կամ հետաղհետէ կը թաղուիս աշխարհային հեշտութեանց և մեղաց մէջ, բայց վտանգի մէջ ես, Աստուծոյ բարկութեան, մահուան և դժոխքի վտանգին մէջ։ Ո՜հ, փախիր դէպ ի Յիսուս։ Հոն միայն ենք ապահով։ Աճապարէ մտնել ներս փրկութեան դռնէն, մինչ տակաւին բաց է այն, վասն զի շուտով պիտի դոցուի, և այնուհետև ի զուր պիտի բաղխես այն դուռը։

Տես Յով. ԺԱ. 9, Եղեկ. Գ. 17—19, Լգ. 1—19, Մարկ. Ը. 34—38, Ղուկ. ԺԲ. 16—21, Բ Պետ. Գ. 1—12։

ԵԿՈՒՐ ՀԻՄԱ, ՎԱՂԸ ԱՒԵԼԻ ԴԺՈՒԱՐ ՊԻՏԻ ԸԼԼԱՑ ՔԵԶԻ ԳԱԼ

Թերևս կը խորհիս թէ ապաշխարութիւնը այս օրուան չափ դիւրին պիտի ըլլայ որ և իցէ

ապագայ ժամանակ մը։ Այս յոյժ վտանգաւոր կերպով խաբուիլ է։ Ամէն տեսակ տպաւորութիւնք կ'աւրուին կրկնուելով, եթէ միայն չգործուին կատարելով։ Եթէ երբեք բնակած ես աղմկալից աղօրիքի, գոռացող գետոյ մը կամ ծովու մօտ, կը յիշես թէ ձայնը որ ի սկզբան կը ձանձրացուցեր, անհանգիստ կ'ըներ քեզ, յետոյ հաղիւ առարկայ կ'ըլլար քու ուշադրութեանդ։ Ճիշդ այսպէս կրօնի ճշմարտութիւնք կրնան խորապէս տպաւորել մտաց վրայ, բայց եթէ այդ տպաւորութիւնք չգործացուին գործելով անոնց համեմատ, այն ճշմարտութեանց ազդեցութիւնը մտաց վրայ հետզհետէ պիտի նուազի և տկարանայ, մինչև որ լսուին կատարեալ անտարբերութեամբ։ Յիսուս կ'ըսէ, "Ահա ես դուռը կայներ եմ ու կը զարնեմ։" Նա կը զարնէ դուռը քարոզներով, գիրքերով, խօսակցութիւններով, խղճմտանքին միջոցաւ, և վսեմ ազդարարութիւններով։ Զայնը կ'արթնցունէ քեզ, բայց եթէ չես ելլեր և բանար դուռը, վաղը քիչ պիտի ազդէ քեզի այն ձայնը, մինչև որ վերջապէս բնաւ չլսես զայն։ Որչափ շատեր, որոց երբեմն խորապէս կ'ազդեր կրօնքը, հիմա բան չեն զգար և արագ և անխռով կ'ինչնեն վար դէպ ի դժոխք։

Անգղիոյ ծովեզերքը զառ ի վեր ժայռերուն կողից վրայ բաղում ծովային թռչունք հաւկիթ կ'ածեն, զորս ժողվելով ոմանք՝ իրենց կեանքը վտանգի մէջ դրած, կը հայթայթեն

ապրուստ։ Անգամ մը մարդ մը հաստատելով իւր երկաթ ձողը գետին, և վար իջնելով այն ձողին կապուած չուանով, գտաւ որ ժայռին ծայրը դուրս ցցուած ըլլալով ինք հեռի կը մնար անոր վարի կողման կողքէն ուր հաւկիթները կը գտնուէին, և չէր կրնար հասնել անոնց առանց օրուելու ետ և առաջ։ Այս կերպով վերջապէս կարող եղաւ իւր ոտները դնել ժայռին վրայ, բայց չուանը ձեռքէն ելաւ։ Մարդուն վիճակը յոյժ սոսկալի էր։ Ծովը կը գոռար հարիւրաւոր ոտնաչափ վարը։ Անկարելի էր անոր մագլցել ոչ դէպ ի վեր և ոչ դէպ ի վար։ Շուտով պիտի կորսուէր անօթութեամբ, կամ իյնալով վար կտոր կտոր ջախջախուէր ժայռերուն վրայ։ Զուա՛նը միայն էր անոր ազատուելու միջոցը։ Ցակաւին կ'օրուէր չուանը ետ և առաջ, բայց երբ դադարէր օրուելէ, անհնար պիտի ըլլար հասնել անոր։ Ամէն անգամ որ կը մօտենար իրեն, աւելի հեռի կը մնար իրմէ քան որչափ նախընթաց անգամուն։ Ամէն վայրկեան որ կը սպասէր՝ կ'աւելնար իւր վտանգը։ Ուստի հաստատ որոշեց, և յաջորդ անգամ որ չուանը դէպ ի անոր մօտեցաւ, ցատկեց յառաջ, բռնեց զայն և վեր ելաւ անոր միջոցաւ ապահով։ Մեղաւոր, քու փրկութիւնդ ևս աւելի կը հեռանայ քենէ ամէն վայրկեան որ կը սպասես։ Վարը դժոխքն է։ Մահը չուտով զքեզ վար պիտի նետէ։ Բայց Յիսուս մօտ է փրկել զքեզ։ Կը հրաւիրէ զքեզ բռնել զինք։ Մի միայն յոյսդ

է նա։ Բռնէ զնա հաւատով։ Զէս կրնար վրի-
պիլ զնա բռնելէ։ Նա պիտի բռնէ զքեզ և
տանի վեր երկինք։ Բայց ամէն վայրկեան որ
կը դանդաղիս կը յապաղիս, դժուարութիւնն
աւելի կը մեծնայ։ Ցիսուսի եկուր հի՛մա։

ԵԿՈՒՐ ՀԻՄԱ, ՎԱՂԸ ԹԵՐԵՒՍ ՇԱՏ ՈՒՇ Է

Թերևս որոշած ես գալ Ցիսուսի բայց ոչ
ճիշդ հիմա։ Կ'ըսես փելիքսի նման, «Դուն
հիմա գնա, ու երբոր ժամանակ ունենամ՝ ես
քեզ կը կանչեմ։» Սատանան գիտէ որ եթէ
թողուս կրօնքը, հաւանականապէս գերի պի-
տի ընէ զքեզ յաւիտեան։ Աստուած կ'ըսէ,
«Այսօր թէ որ անոր ձայնին պիտի լսէք, ձեր
սիրտերը մի խստացընէք, ահա հիմա է փրր-
կութեան օրը։» Սատանան կը փսփսայ ական-
ջիդ, «Ոչ հիմա, այլ վաղը։» Կը համոզէ քեզ՝
թէ Աստուծոյ պիտի տաս քու բոլոր ապագայ
օրերդ, եթէ միայն նուիրես իրեն ներկայ օ-
րերդ։ Ո՞հ, զգուշացիր վաղուընէ։ Հոգիներ
կը կորսուին ընդհանրապէս, ոչ վասն զի կ'որո-
շեն բնաւ չապաշխարել, բայց վասն զի կը թո-
ղուն ապաշխարելու գործը մինչև ապագայ
ժամանակ մը, և տակաւին կը յապաղին մինչև
որ այլ ևս անցած ըլլայ ժամանակը։ Վաղիւ-
ները խուռն բաղմութիւններ լեցուցած են
դժոխքը։

Թերևս կը խորհիս սպասել մինչև հիւան-
դութիւն յարձակի վրադ։ Բայց հիւանդին
անկողինը ամենէն անյարմար տեղն է ապաշ-

խարութեան համար։ Թերևս այն ատեն քու
միտքդ այնպէս խանգարուած ըլլայ զառան-
ցանքով, տենդով կամ ցաւով, կամ թերևս
միտքդ ալ հիւանդացած ըլլայ մարմնոյդ հետ
այնպէս որ կարող չըլլայ խորհել։ Խաղաղու-
թիւնը որով բաղմութիւնք կը թուի թէ կը
մեռնին, ցաւ չզգալէն է։ Շատեր որ հիւան-
դութեան ժամանակ ցուցուցած էին թէ ա-
պաշխարեցին, երբ առողջացան՝ աւելի անհոգ
եղան քան որչափ առաջ։ Զէր այն ճշմարիտ
դարձ, և եթէ մեռած ըլլային, պիտի կոր-
սուէին։ Հիւանդութեան ժամանակ փրկուե-
լու քիչ յոյս կայ։

Բայց թերևս բնաւ չգայ այսպիսի ժամանակ
մը։ Դուն թերևս մեռնիս վայրկեան մը առաջ
անդամ չիմացած։ Թէպէտ այսօր ողջ առողջ
ըլլաս, կրնաս վաղը մեռած ըլլալ։ Եւ քանի
որ կեանքն այսպէս անստոյգ է, կը մերժե՞ս
փրկութիւնը։ Բանտարկեալի մը մահուան վճիռ
տրուած է։ Զգիտեր թէ երբ է սպանման ժա-
մը, բայց ըսուած է անոր թէ եթէ մահուան
ժամը գալէն առաջ աղաչէ պաղատի կառա-
վարչին, պիտի խնայուի իր կեանքին։ Բայց
բանտարկեալը կ'ըսէ, «Վաղը կը ղրկեմ ա-
ղերսագիրս։» Եւ երբ վաղը կու գայ, կ'ըսէ
դարձեալ, «Ցակաւին բաւական ժամանակ կայ,
ես քիչ մըն ալ կրնամ սպասել։» Եւ ահա
յանկարծ կը բացուի բանտին դուռը, և բան-
տապետը և դահիճը կը մտնեն ներս։ «Ո՞հ,
սպասեցէք, և ղրեմ աղերսագիրս,» կ'ըսէ։

«Ոչ» կը պատասխանեն, «ժամը զարկած է, ժամանակը շատ ուշ է, պարտիս մեռնել։» Ողորմելի՜ մեղաւոր, դատապարտուած ես . . . ։ Չես գիտեր թէ ե՛րբ պիտի մեռնիս։ Թերեւս ա՛յս օր։ Դուն ապաշխարութիւնդ կը թողուս վաղուան։ Բայց վաղը գուցէ ըլլաս դժոխքը։ Քրիստոս այսօր կը զարնէ դուռդ, բայց յիշէ որ մահը թերեւս բաղխէ վաղը։ Թէպէտ դուրս թողուս քու լաւագոյն բարեկամդ, մահը ներս կը խուժէ, և կը վազցունէ քեզ տանել Դատաւորին։ Յիսուսի եկ այսօր։ Կ'ուզէ փրկել քեզ։ Երկնից դուռը բաց է այսօր։ Վաղը թերեւս ուշ պիտի ըլլայ։

Կարդա Մատթ. ԻԴ. 36—51, Իե. 1—13, Ղուկ. ԺԲ. 16—21, ԺԳ. 24—28, Գործ. ԻԴ. 25։ Բ Կոր. Զ. 1, 2, Եբր. Գ. 7—11։

ՊԻՏԻ ԿՈՐՍՈՒԻՍ, ԵԹԷ ՉԳԱՍ

«Ինձի՞ ինչ պէտք է ընել որ փրկուիմ։» «Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսին։» «Ինձի՞ ինչ պէտք է ընել որ կորսուիմ։» «Անհոգ եղիր անանկ մեծ փրկութեան մը։» Հարկ չէ ընել բան մը։ Մենք արդէն կորսուած ենք։ Յիսուս կ'առաջարկէ փրկել զմեզ. բայց եթէ մենք մերժենք անոր առաջարկութիւնը, կը մնանք ինչպէս որ ենք։ Եթէ մարդ խայթուի մահացու օձէ մը, բայց մերժէ գործածել մի միայն դարմանը, կը մեռնի։ Աւետարանն է մի միայն դարման հոգւոյն, և եթէ անհոգ գտնուինք անոր, մեղքը կը սպաննէ մեզ։ Հարկ

չէ որ ըլլաս գող կամ մարդասպան, հոգիդ կորսնցունելու համար։ Կրնաս արտաքուստ պահել կրօնքին բոլոր պատուէրները, բայց եթէ չես դար Յիսուսի, կը կորսուիս։ Մտածէ սա ծանրակշիռ խօսքին վրայ. «Մենք ինչո՞ր պիտի աղատինք՝ թէ որ անհոգ ըլլանք անանկ մեծ փրկութենէ մը։» Աղատումն անկարելի է եթէ անհոգ գտնուինք ապահով լինելու մի միայն միջոցը գործածելու մասին։ Նաւակ մը կը տարուի գետոյ մը հոսանքէն փրփրադէզ սահանքի մը մօտ, ուր եթէ հասնի՝ պիտի կորսուի, բայց կայ երկնցած մի միայն ժայռ մը որուն մօտէն կանցնի նաւակը, և ուր կայ մարդ մը որ կը սպասէ ձեռքը չուան մը բռնած։ Դիցուք թէ նաւակին մէջ գտնուողները անհոգ ըլլան բռնել չուանը, ի՞նչպէս հնար է անոնց ազատ մնալ այն վտանգէն։ Անհոգութիւնն է անոնց կործանումը։ Միայն Յիսուս կրնայ փրկել հոգին։ «Եւ ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ, ինչու որ անկէ ի զատ ուրիշ անուն մը չկայ երկնից տակը մարդոց մէջտրուած, որ անով կարող ըլլանք փրկուելու։» Ով մեղաւոր, քու կորուստդ ստոյգ է եթէ մերժես զՅիսուս։ Եւ յայնժամ ո՞րչափ մեծ պիտի ըլլայ քու յանցանքդ և պատիժդ։ «Ալ անկէ եաւ մեղքերու համար ուրիշ զոհ մը չմնար, հապա զարհուրելի սպասել մը դատաստանին, ու կրակի բարկութիւն մը կը մնայ, որ պիտի լափէ հակառակորդները։ Մէկը թէ որ Մովսէսին օրէնքը անարգեր, առանց ողորմութեան երկու կամ երեք վկաներով կը մեռնէր. ալ ո՛րչափ պատժոյ արժանի պիտի սեպուի կը

կարծէք անիկա , որ Աստուծոյ Որդին ոտքի տակ առաւ , և ուխտին արիւնը անմաքուր սեպեց , որ անով ինքը սրբուեցաւ , և շնորհաց Հոգին նախատեց։ «Ի՞նչ խաբէութիւն բռնած է քեզ։ Կը խորհիս թէ Աստուած ի գործ պիտի չդնէ՞ ինչ որ սպառնացած է , կը խորհիս թէ դուն պիտի փախչի՞ս անոր սուր աչքէն , կամ կը խորհիս թէ ժայռերը պիտի ծածկե՞ն քեզ։ Մնոտի՜ յոյսեր։ Զկայ աղատում բայց եթէ դալով Յիսուսի , և լոկ անհոգութիւնն է ստոյգ կորուստ։ « Որովհետև ես կանչեցի , ու դուք չուզեցիք լսել, ես ալ ձեր թշուառութեանը վրայ պիտի ծիծաղիմ, ու ձեր վախը հասնելուն՝ ծաղր պիտի ընեմ. անատենը ինծի պիտի աղաղակեն , ու պատասխան պիտի չտամ. զիս պիտի փնտռեն ու պիտի չկրնան դտնել. որովհետև գիտութիւնը ատեցին ու Տէրոջը վախը չընտրեցին . իմ խրատներս չուզեցին , ու բոլոր յանդիմանութիւնս անարդեցին։» Ով մեղաւոր , փախի՛ր այս ահաւոր սպառնալիքէն։ Յիսուս այժմ կը կենայ բաց բազուկներով։ Կ'աղաչէ զքեզ որ դաս անոր և փրկուիս։ Այլևս մի՛ մերժեր անոր շնորհքը։ Եկուր քու բոլոր մեղքերովդ և վիշտերովդ , եկուր ճիշդ ինչպէս որ ես, եկուր իսկոյն։ Բնաւ դուրս պիտի չհանէ քեզ։ Եկուր Յիսուսի։ Եկուր Յիսուսի։

Տես Առակ. Ա. 24—31, Յովհ. Գ. 14—21, 36, Գործ. Դ. 12, Եբր. Բ. 1—3, Ժ. 26—31։

Պետական Գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. անվան
Ա. им. А. Мясникова

1823

<< Ազգային գրադարան >>

NL0028634

1769